

# Նովրուզ

(Իրանցիների «Նոր օրը»)

Վարդան Ոսկանեան


Նովրուզը՝ Նոր տարին, իրանցիների հնագույն տօներից է Ի տարբերություն մինչիրանական իրանի շատ ուշատնշանաւոր տօների՝ ինչպիսիք էին բահմանգանը, սադէն, թիրգանը, որոնք կորցրել են իրենց նախկին շուքն ու մոռացութեան մատնել, այն այսօր էլ տօնուամ է մեծ հանդիսատարութեամբ:

Նովրուզ (տաջիկ Նահրոզ) բառը նշանակում է «Նոր օր»: Այս տօնն ունի մի քանի այլ անուններ եւ՝ որոնցից են բահար-ջաշն-է-Ջամշիդի (գարնան տօն, Ջամշիդի տօն): Աւանդովի համաձայն, Նովրուզի տօննն առաջին անգամ նշել է իրանի Փիշդարդեան հարստութեան առասպելական արքայ Ջամշիդը: Չնայած Աւեստայում գրադաշտականները Մուրբ Գրքում, այս տօնի մասին որեւէ յիշատակութիւն չկայ, սակայն արդէն պահլաական գրականութեան մէջ (վաղ միջնադար) խօսում է նրա մասին: Միջին պարսկերէնում այն ունեցել է Նոր-կրօժ՝ «Նոր օր» անունը: Քանի որ իրանական տոմարը (հայկականի նման) եղել է շարժական, ապա Նովրուզի տօնը համընկնում էր տարւայ տարբեր եղանակների հետ: 11-րդ դարում սելջուկեան Ջալալ-էդդին Մալեքահի հրամանով, միջնադարեան իրանի նշանաւոր գիտնական եւ բանաստեղծ Օմար խայյամի եւ մի քանի այլ գիտնականների կողմից մշակուած է մի տոմար՝ այսպէս կոչած արեգականային հիշրայի կամ Ջալալեան տոմարը, որն աչքի է ընկնում մեծ ճշգրտութեամբ եւ մինչեւ օրս էլ օգտագործուած է իրանում (լուսնային եւ գրիգորեան օրացոյցների հետ միասին): Ըստ արեգականային օրացոյցի, իրանական Նոր տարին սկսում է Փարաւրդին ամսւայ 1-ից (գրիգորեան տոմարով մարտի 21-ից)՝ գարնանային գիշերահասարի օրը, երբ Արեգակը մուտք է գործում խոյի համաստեղութիւն (յիշեցնենք, որ հին հայերը եւ Նոր տարին՝ Ամանորը նշել են մարտի 21-ին):

Մասանեան իրանում Նովրուզի տօնակատարութեանը մասնակցել եւ աւելին՝ այն ղեկավարել են արքաները: Այդ օրը կրակարաններում ատրուշաններում, կատարել են գահաբերութիւններ, տեղի են ունեցել համաժողովրդական թե՛ տօնախմբութիւններ: 7-րդ դարում, իրանում իսլամի մուտքից յետոյ, Նովրուզի տօնը պետական շրջանակների կողմից մոռացութեան է մատնուած գոյատեւելով սակայն ժողովրդի ծոցում: Բայց

արդէն 9-10-րդ դարերում սկիզբ առած իրանական վերածննդի շարժումը, ոչ միայն Նովրուզի վրա-ից մաքրում է մոռացութեան փոշին, այլեւ նրա տօնակատարութիւնը բարձրացնում մի նոր աստիճանի: Պատմական այդ փուլում Նովրուզը տօնել է անգամ Արաբական խալիֆայութեան մայրաքաղաք Բաղդադում: Չուտ իրանական ծագում ունեցող այս տօնը, մուտք գործելով իսլամի տօների շարքը (յատկապէս նրա շիա ուղղութեան), տարածւեց նաեւ ոչ իրանական մահմեդական այլ ժողովուրդներ՝ այդ թիւում թիւրքալեզու ցեղերի մէջ, որոնք վերջինիս տեցին բուլղար բայրամ, Նահրուզ բայրամ (մեծ տօն, Նովրուզի տօն) անունները:

Ժամանակակից իրանալեզու երկրներում իրանում ԱՖղանստանում, Տաջիկստանում Նովրուզը նշում է պաշտօնապէս մարտի 21-ին՝ ըստ Գրիգորեան օրացոյցի, իսկ արեգականային՝ Փարաւրդինի 1-ին (ԱՖղանստանում այս ամիսն ունի Համալ անունը): Այս երեք երկրներում ծիսակարգը միմեանցից առանձնապէս շատ չի տարբերուած: Բուն Նովրուզի տօնին նախորդում եւ յաջորդում են մի քանի նշանաւոր օրեր: Տօնակատարութեան նախապատրաստութիւնը սկսում է անցնող տարւայ վերջին չորեքշաբթի օրանից, որն անանում են չահարչամբէ սուրի կամ չարչամբէ ախար



(«Նուրախութեան չորեքշաբթի» կամ «վերջին չորեքշաբթի»): վերջին անանումը տարածած է ԱՖղանստանում եւ Տաջիկստանում: Այդ օրը, մուֆն ընկնելուն պէս, տների բակերում, փողոցներում եւ հրապարակներում բաղմաթիւ խարոյկներ են վառում, եւ մարդիկ ցատկում են կրակի վրայով (հայոց Տեանընդառաջ, Տրնդէզ տօնի նման): Այս արարողութիւնը կատարում է երգի եւ երաժշտութեան ուղեկցութեամբ: խարոյկները մարելուց յետոյ հաւաքում են մոխիրը եւ լցնում տների պատերի տակ հաւատարմով, որ այն բալքը տարում մարդկանց առողջութիւնը է բերելու: Այդ նոյն օրը, ովքեր ցանկանում են կանխագուշակել իրենց ապագան, թաքնում են փողոցի մի անկիւնում կամ բանուկ որեւէ այլ վայրում եւ լսում անցորդների խոսակցութիւնը՝ դրանց մէջ փնտրելով որոշակի իմաստ՝ կապած սեփական ճակատագրի եւ ապագայի հետ:

Այս սովորոյթը անանում են Ֆարսը (կազմած է Ֆալ «գուշակութիւն» եւ զուէ «ականջ» բառերից): Գոյութիւն ունեն ապագան գուշակելու այլ ձեւեր եւ: Ընդունած ձեւ է թաշկինակը կամ հագուտի փէշը քարակապ գցելը եւ անծանօթ անցորդին այն բացել տալը: Եթէ հանգոյցը բացում է առանց դժարութեան, ապա գալիք տարում բոլոր հարցերը յաջողութեամբ կը լուծւեն: Տարւայ վերջին չորեքշաբթի օրւայ երեկոյան վերջում են մի բոլորովին նոր չօգտագործած կոճակ եւ հարը խափանելու՝ նպատակով այն ջարդում տան առջեւ, իսկ գիւղերում նետում են այն տանիքից ցած: Այս սովորոյթը անանում են քուշէքեանի (բանացի՝ «կոճակոտորու-թիւն»):

Շաբ. էջ 16-ում

Էձօն ՅՅ ՆՅ ՍԾՅ ՍՅ ՍՅն

Վարդանանքը տօնեց Թ.Հ.ՈՒ. Զհարմահայ միութիւնում: - Սոյն թեւականի փետրարի 23-ին Թեհրանի Հայ Ու. Զհարմահայ միութեան նախաձեռնութեամբ, նոյն միութեան կենտրոնատեղիում մի ձեռնարկ էր կազմակերպւել նիւրած Սրբ. Վարդանանց տօնին:



Տէրունական աղօթքից եւ բացման խօսքից յետոյ, որպէս բանախօս ելոյթով ներկայացան բարեխնամ առաջնորդ Տէր Սեպուհ եպիսկոպոս Սարգսեանը:

Օրայ բանախօսը նախ ներկայացրեց 404-435թթ. Հայաստանի եւ Հայ ժողովրդի պատմական վիճակը, ապա անդրադարձաւ Վարդանանց պատերազմից մնացած հոգեւոր ազգային ժառանգութեանը:

Սրբազան հօր տպատրիչ ելոյթից յետոյ միութեան ղեկավարները, բաժինը ղեկավարութեամբ Մ. Հայրապետեանի ներկայացրեց «Մեր երթը» ասմունքը: Այստեղ ասմունքում էին՝ Հայրիկ Աղանեանը, Նորա Զանեանը, Անիտա Նայե Նեօպոլ, Արփի Ալլահվերդեանը, Անահիտ Մուսախանեանը, Արզին, Ազաթա, Անգինէ Աբրահամեանները, Վանանդ Անդրէասեանը, Արմոնդ Սիմոնեանը եւ Վարդան Աւագեանը:

Սրբազան շարունակութեան մէջ միութեան «Ուրարտու» երգչախումբը եւ ելոյթ ունեցաւ, որը կատարեց ազգային եւ կրօնական երգեր: Երգչախումբը խմբավարում էր Անի Յակոբեանը, մենբերգում էր Ժիրբերտ Աբաղը եւ դաշնամուրով խմբին ընկերակցում էր Արին Յովհաննիսեանը:

Կլոր սեղան Թեհրանի «Արարատ» մարզաշահում.- Սոյն թրականի փետրարի 23-ին Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպութեան «Արեստից» միութեան նախաձեռնութեամբ մի կլոր սեղան էր կազմակերպւել «Աստուծոյ 12 օրը» թատերգութեան բեմադրութեան առիթով:

Օրակարգի նիւթ դարձան թատերգութեան բովանդակութիւնը եւ բեմադրութիւնը: Նախ վերլուծութեան ենթարկեց Պերճ Զէյթունցեանի գրչին պատկանող վերոյիշեալ թատերգութեան բովանդակութիւնը, այնուհետեւ քննարկեց բեմադրութեան անհետ խնդիրները: Եղան քննարկատուները նաեւ բեմադրող թատերախմբի հասցէին՝ դրատանքի խօսքեր:

Ինչ խօսք, որ այդ կլոր սեղանի կազմակերպելու գաղափարը գեղեցիկ մտայնացում էր, եւ եթէ ճիշտ հիմքերի վրայ դրած լինէր եւ լաւ ղեկավարէր անշուշտ արդիւնքը խիստ նպաստաւոր կը լինէր: Սակայն չգիտես թէ ինչո՞ւ կլոր սեղանի վարիչը արտայայտողներին խօսելու առիթ տալու համար վարում էր ըստ ճաշակի, եւ դա պատճառ էր դարձել ոմանց դժգոհութեան:

Յեղափոխական երգերի երեկոյ Թ.Հ.Ու. Զհարմահայ միութիւնում.- 2001 թ. մարտի 1-2-ը Թեհրանի Հ.Ու.Ս.Միութեան կենտրոնական սրահում տեղի ունեցաւ «Յեղափոխական երգերի երեկոյ» ծրագիրը:

Երգերի մենակատարն էր Արթին Քելչեանը: «Անի» երաժշտական խումբը համագործակցում էր մենբերգչին: Երաժշտական խմբի անդամներն էին՝ Արին Սաչիկեանը, Կարէն Թահմազեանը, ԲաժՅի Մարտիկեանը, Միշէլ Մուսախանեանը, Լիօ Զանին, Կարէն Օհանեանը եւ Արթին Մեսրոպեանը: Ասմունքում էր Արթին Մուրադեանը:

Սրագիրը բաղկացած էր երկու բաժնից: Երգացանկը ամբողջութեամբ կազմած էր յեղափոխական երգերից, որոնց շարքին էին պատկանում «Ղարաբաղ», «Էս ի՞նչ ցաւ էր», «Գարեգին Նեօպոլ», «Գետաշէն» եւ մի քանի տարածւած երգեր:

Հարկ է նշել, որ խումբը ժամանել էր Ն.Զուրաբից:

Էձօն ՅՅ

Իրանի եւ Ռուսաստանի նախագահների հանդիպումը՝ կայացաւ մարտի 12-ին.- Յենկելով Ռուսաստանի արտգործնախարարութեան օգնական Ալեքսանդր Լուկովի հետ ունեցած հանդիպումից՝ ըստ Իրանի արտգործնախարար Սաադի սպասուած էր, որ Իրանի հանրապետութեան նախագահ Կլորսեանի Ռուսաստան ալցելուցութիւնը երկու երկրների յարաբերութեան մէջ նոր աշխտութիւն առաջացնի՝ տարբեր բնագաւառներում:



ստւած էր, որ Իրանի հանրապետութեան նախագահի Ռուսաստան ալցելուցութիւնը երկու երկրների յարաբերութեան մէջ նոր աշխտութիւն առաջացնի՝ տարբեր բնագաւառներում:

Ըստ Իի հանրապետութեան նախագահ՝ «Անիտանդութիւնը կը հզօրանայ իշխանութեան մէջ ժողովրդի մասնակցութեամբ».- Նախագահ Կուրա յի խորհրդարանի նախագահի Սաթաբին հետ ունեցած հանդիպման ժամանակ, յայտնելով վերոյիշեալ տեսակէտը՝ անկախութեան եւ առաջադիմութեան ձգտումը համարեց երկու երկրների յեղափոխական ժողովուրդների համանման իւրախտակութիւնը:

Պրն. Սաթաբին իր խօսքերի մէջ ասաց. «Մի ժողովուրդ, որը իրագործել է մեծ յեղափոխութիւն եւ ինքն է տնօրինում իր ճակատագիրը, կը դիմադրի դժարութիւններին եւ չի նահանջի իր նպատակներէց»:

Հանդիպման ընթացքում Կուրա յի խորհրդարանի նախագահը երկու երկրների տեսակէտները շատ համարելով ասաց տարբեր ոլորտներում յարաբերութիւնները զարգացման գաղափարը նկատուած է երկու երկրների բոլոր պատասխանատուների մօտ:

ԾՅ ՍՅ ÷ ÷

Հարթագիւղում յայտնաբերուած կը՝ Հայրաբերը թուրքերի գոհերինն են (Ազգ օրաթերթ 22.02.2001) Արմէնպրես.- Ինչպէս հաղորդել է, Լոտու մարզի Հարթագիւղի բնակիչները հայ տարւայ յունարին իրենց հողամասում գտնուող ջրհորը մաքրելիս յայտնաբերել էին 50-60 մարդու կմախք: Հարցուցել էր քրէական գործ: Լոտու մարզպետարանի լրատական ծառայութեան պետ է. Յովսէփեանն ասաց, որ քրէական գործը մարզի դատախազութիւնում կարճուել է, քանի որ գիւղի տարեց բնակիչների վը-

կալովթեամբ Հարթա գիւղում 1918 թնականին բնակիչների գանգաժային կոտորած է եղել թուրքական բանակի կողմից: 97-ամեայ Արաքսի կարապետեանի վկայութեամբ, այդ տարիներին գիւղը ունեցել է մօտ 2000 բնակիչ, որոնցից 1600-ը կոտորել են: Այս գիւղում խորհրդային տարիներին եւ մի քանի գիւղացիների տնամերձ հողամասերում կմախքներ են յայտնաբերել, բայց այն ժամանակ այդ փաստերը լուսթեան են մատնել:

**Կ**աթողիկոսը՝ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի պաշտօնական հիւր (Ազգ օրաթերթ 23.02.01) Նոյեան Տապան.- Փետրարի 23-ին Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը անդրանիկ պաշտօնական այցով մեկնել է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի:



**Ե**րեւանում հանդէս կը գայ Լա Սիլայի նազախումբը՝ Ռիկարդօ Մուտիի ղեկավարութեամբ (Ազգ օրաթերթ 24.02.01).- Յուլիի 23-ին՝ Հայաստանում քրիստոնէութեան պետական կրօն հոգակման 1700-ամեակի տօնակատարութեամբ պետական ծրագրի շրջանակներում, Երեւանում համերգով հանդէս կը գայ Լա Սիլայի սիմֆոնիկ նազախումբը՝ աշխարհահոգակ Ռիկարդօ Մուտիի ղեկավարութեամբ: Համերգի կազմակերպման եւ հեռարձակման հետ կապած անհրաժեշտ մանրամասներ ճշտելու եւ քննարկելու նպատակով Հայաստան է ժամանել Ռաւենայի փառատօնի եւ Իտալիայի ազգային հեռուստատեսութեան պատասխանատուներից կազմած պատվիրակութիւնը: Նրանց ընդունեց 1700-ամեակի տօնակատարութեան կազմակերպման պետական յանձնաժողովի փոխնախագահ Խոսրով Յարովիւնեանը: Հանդիպման ընթացքում քննարկեցին կազմակերպչական եւ տեխնիկական մի շարք հարցեր:

**Վ**ահրամ Աբաջեանը՝ ղեսպան Լոնդոնում (Ազգ օրաթերթ 28.02.2001).- Նախագահ Ռոբերտ

Քոչարեանի փետրարի 28-ի հրամանագրով Վահրամ Աբաջեանը նշանակել է Մեծ Բրիտանիայի եւ Հիւսիսային Իռլանդիայի Միացեալ Թագաւորութիւնում Հայաստանի Հանրապետութեան ղեսպան /նրստավարը՝ Լոնդոն/:

**ԵԱՀԿ** -ն հական արդիւնքներ է սպասում Քոչարեան-Ալիեւ առաջիկայ հանդիպումից (Ազգ օրաթերթ 28.02.2001).- «Քանի ղեռ շարունակում են բանակցութիւնները, երկխօսութիւնը Հայաստանի եւ Ադրբեյջանի նախագահ-



ների միջեւ, կայ յոյս, որ ԼՂ հակամարտութիւնը կը գտնի իր խաղաղ լուծումը», երեկ ՀՀ արտգործնախարարութիւնում մամուլի ասուլիսի ժամանակ նշեց ԵԱՀԿ գործող նախագահ, Ռումինիայի արտգործնախարար Միրչի Զոնան: Վերջինիս գլխավորութեամբ ԵԱՀԿ պատվիրակութիւնը երկօրեայ այցով ժամանել էր Երեւան եւ հանդիպել ՀՀ նախագահին, Աժ խօսանկին, արտգործնախարարին:

**ԱՊ Հ**երկրների երկաթուղայինների խորհրդի 28-րդ նստաշրջանը՝ Հայաստանում (Ազգ օրաթերթ 28.02.2001).- Մարտի 6-7-ը Հայաստանում առաջին անգամ տեղի կունենայ երկաթուղայինների խորհրդի 28-րդ նստաշրջանը, որին կը մասնակցեն ԱՊ Հ 12 երկրների, Մերձբալթեան երկրների, Բուլղարիայի երկաթուղայինների ղեկավարները, նաեւ միջազգային շատ կազմակերպութիւններ:

**ԱՄՆ** -ը կը շարունակի աջակցել կարգաւորման ջանքերին (Ազգ օրաթերթ 27.02.01).- Նախագահ Ռոբերտ Քոչարեանը երեկ ընդունել է Հայաստանում Ամերիկայի Միացեալ Նահանգների ղեսպան Մայքլ Լեմոնին: Վերջինս իր



երլթում յայտնեց վերոյիշեալ պետական տեսակետը:

**Հ**այաստանը Ադրբեյջանին յանձնեց եւ երկու ռազմագերիները (Ազգ օրաթերթ 28.02.2001) Նոյեան Տապան.- Ի նշան բարի կամքի Հայաստանը եւ երկու ռազմագերիներ է յանձնել Ադրբեյջանին: Ինչպէս յայտնեցին ՀՀ ազգային անվտանգութեան նախարարութիւնից, թէ քաղաքացիական անձ էֆենդի Գեանջիւլ, թէ գինձառալող Զուլֆի Սուլթանովը ձերբակալել էին մօտ երկու տարի առաջ:

ՅՇԿ<sup>3</sup> 1/2 3 ԱՅԿ

**Ղ**արաբաղեան խնդրի լուծումից ամէնից առաջ կը շահի Ռուսաստանը» (Ազգ օրաթերթ 22.02.01) Ամրմէնպրես.- Ղարաբաղեան խնդրի քաղաքական կարգաւորմանը նպատակամղած քաղաքական համաձայնութիւններից կը շահեն նրա մէջ ներքաշած բոլոր կողմերը, եւ ամէնից առաջ՝ Ռուսաստանը: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալութեան հաղորդման, այդ մասին այսօր Մոսկայում կայացած մամուլի ասուլիսում յայտարարել է Ռուսաստանի արտգործնախարար Իգոր Իւանովը: «Ռուսաստանը միշտ էլ շահագրգռուած է եղել այդ հիմնախնդրի քաղաքական լուծմամբ,- ընդգծել է նա: - Մենք երբեք չենք ինքնամեկուսացել այդ գործընթացից եւ ապագայում էլ այդ չենք անի»:

**Շ**եարդնաձէն՝ Զաւաթի եւ հակահանրամարտական (Ազգ օրաթերթ 02.03.2001).- Վրաստանի կառավարութեան վերջին նիստում նախագահ Շեարդնաձէն նշել է, թէ «Զաւաթի մասին վերջը պիճելի յօրածներ են տպագրում ոտակաւ, ժամանակ առ ժամանակ՝ հայկական մամուլում»: Շեարդնաձէն

չեչտել է, որ Հարկ եղած դէպքում Վրաստանի նախագահը եւ գործի հետ առնչութիւն ունեցող գերատեսչութիւնները կը պատասխանեն նըման հրապարակումներին. «Վրաստանը Սամցխէ-Ջաախեթիի մասին ցանկացած կանխակալ կամ խեղաթիւրած հրապարակում անընդունելի է համարում: Կ ոչ եմ անում այդ շրջանի նկատմամբ լինել զգոյշ եւ հեռատես»: Վրաստանի ղեկավարը, ինչպէս հաղորդում է վրացական «Իպրինդա» գործակալութիւնը, ասել է, որ «Հայաստանի յատուկ հետաքրքրութիւնը Ջաախեթիի նկատմամբ տրամաբանական է, քանզի Հայերին չի կարող չհետաքրքրել Վրաստանի հայկական համայնքի վիճակը»:

**ԱՄՆ** շրջապատում է Ազգայնականների խնդիրներին» (Ազգ, 03.03.01).- Հարց է տալիս Ա. Ազգային ճակատ կուսակցութեան տեսակետներն արտայայտող «Ազգային» թերթին, անդրադառնալով ԱՄՆ նախագահ Բուշի՝ Հ. Ալիեւին ուղղած նամակին: «Բուշն ասում է, որ խանդավառած է Ալիեւ-Քոչարեան փարիզեան հանդիպմանը արձանագրած առաջընթացից». մէջբերելով ուղերձի այս հատածը՝ թերթը եզրակացնում է. «Սա նշանակում է, որ ԼՂ կարգաւորման շուրջ Քոչարեանի եւ Ալիեւի բանալոր համաձայնութեան հասնելու մասին խօսակցութիւնն անհիմն է»:

**Ա. Ղուկասեան. Կարգաւորումը պէտք է հիմնի իրողութիւնների վրայ** (Ազգ օրաթերթ 03.03.2001) Ամբողջութեամբ ԼՂՀ նախագահ Արկաղի Ղուկասեանը տարածաշրջանի ժամանած ԵԱՀԿ գործող նախագահ, Ռոմիւնիայի արտաքին գործերի նախարար Միրչա Ջոանայի հետ Երեւանում ունեցած հանդիպման ընթացքում ներկայացնելով ԼՂՀ դիրքորոշումը, ընդգծել է, որ հակամարտութեան կարգաւորումը պէտք է հիմնուի «տարածաշրջանում ձեւաւորած իրողութիւնների, այլ ոչ թէ արեւտական օրէն ստեղծած մոդելների վրայ»:



**Միջազգային կոնֆերանսը դատապարտեց Հայոց ցեղասպանութիւնը** (Ազգ օրաթերթ 22.02.2001) Նոյեան Տապան.- Ուղղափառու-



թեան եւրոպական միջխորհրդարանական վեհաժողովին (ՈՒԵՄՎ) մասնակից երկրների միջազգային կոնֆերանսը դատապարտեց Օսմանեան կայսրութիւնում 1915 թականին իրականացած Հայոց ցեղասպանութիւնը: Կոնֆերանսում, որն անցկացեց փետրարի 21-22-ը Երեւանում, ընդունեց յատուկ յայտարարութիւն, որտեղ համոզմունք է արտայայտում, որ ցեղասպանութեան դատապարտումը կը նպաստի վրաստահոլութեան միջոցառումներ, տարածաշրջանում խաղաղութեան եւ կայունութեան ամրապնդմանը, ժողովուրդների մերձեցմանը: ՈՒԵՄՎ անդամ են քսանից անկի եւրոպական երկրներ:

**Խաղաղասէրների առջև են նըստել 704 շախմատիստներ.** Յրանսիայի Քաիել լա Գրանդ քաղաքում մեկնարկել է խոշոր մրցաշար, որին տարբեր երկրների 704 շախմատիստներ են մասնակցում: Նրանց թիւում են մի քանի տասնեակ դրոսմայստերներ: Մրցաշարում հանդէս են գալիս նաեւ Հայաստանի երեք ներկայացուցիչներ՝ միջազգային դրոսմայստերներ Էլիւնա Գանիէլեանը, Լեւոն Արոնեանը եւ միջազգային վարպետ Սերգէյ Գալրովը:

**Թուրքիայի բանկային ճգնաժամը սպառնում է եւրոպական բանկային համակարգին** (Ազգ օրաթերթ 23.02.2001) Նոյեան Տապան.- Եւրոպական բանկերին լուրջ խնդիրներ են սպառնում Թուրքիայի բանկային ճգնաժամի պատճառով: Այս կարծիքն են յայտնում բրիտանական «Փայնենչ թայմս» թերթում հըրապարակած յօդածի հեղինակները: Թուրքիայի արտաքին պարտքի ընդհանուր գումարը, փորձագէտներ

ըի գնահատմամբ, մօտ 110 մլրդ դոլար է: Այդ գումարի 70%-ից անխն եւրոպական բանկերի տրամադրած վարկերն են: Ճգնաժամի պատճառով մի շարք թուրքական բանկերի եւ ընկերութիւնների իրենց պարտքերը սպասարկելու անկարողութիւնը կարող է հանգեցնել վիթխարի ֆինանսական կորուստների եւրոպական բանկերի համար, որոնք հանդէս են գալիս որպէս Թուրքիայի վարկատուներ, որոնցից խոշորագոյնը գերմանական բանկերն են:

**Ձինած աւագ կները թալանել են Վրաստանից Հայաստան մեկնող աւտոբուսի ուղեւորներին** (26.02.01 Արմէնպրես).- Երկուշաբթի առաւտեան Վրաստանի հարաւում Գմանիսի շրջանի Գանթիաղ գիւղի մօտ գինւած աւագ կները թալանել են Վրաստանից Հայաստան ընթացող ուղերթային «Իկարու» աւտոբուսի ուղեւորներին: Ինչպէս Փրայմ նիւսի թղթակցին հաղորդեցին Վրաստանի ներքգործնախարարութիւնում, մինչեւ տեղական ոստիկանութեան աշխատակիցների պատահարի վայր ժամանելը հանցագործներին յաջողուել էր թալանել:

**Իրաքում բացեց Հայաստանի դեսպանատունը** (Ազգ օրաթերթ 27.02.2001).- Փետրարի 25-26-ը ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանեանն աշխատանքային այցով գլոսնրում էր Իրաքի Հանրապետութիւնում: Այցի նպատակն էր քննարկել Իրաքի ղեկավարութեան հետ երկուստեք շահաւէտ համագործակցութեան հնարաւորութիւնները, յատկապէս՝ առեւտրատնտեսական ոլորտներում:

**Բուշի ուղերձը Ալիեւին** (Ազգ օրաթերթ 28.02.01).- Ղարաբաղեան հակամարտութեան խաղաղ կարգաւորումը ԱՄՆ-ի նոր վարչակազմի գերակա յոյսերից մէկն է: Այդ մասին ասած է Ադրբեյջանի նախագահ Հէյդար Ալիեւին Ջորջ Բուշի յղած ուղերձում: Նամակի տեքստն այօր հրապարակուել է Բաքուի թերթերում: ■




## Հասարակական

### «Ղարաբաղի հարցը ժողովրդից քարուն չի լուծվի»

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Կառավարութեան ցիտի մէկի աւարտից յետոյ լրագրողների հարցերին պատասխանեց նախագահ Ռ.Քոչարեանը: Հարցե-րի շրջանակը լայն էր դարաբաղեան հակամարտութիւն, երկրի տնտեսական վիճակ, հոկտեմբերի 27-ի դատավարութիւն: Սիւս թէ նախագահն ինչպէս պատասխանեց այդ հարցերին:



-Վիճակագրական ծառայութեան տեղաւերով յունարին Հայաստանն ունեցել է 12 տոկոս տնտեսական աճ, որն աննախադէպ է: 40-41 տոկոսով աճել են արտահանման, 21 տոկոսով արդիւնաբերական արտադրանքի թողարկման ծաւալները: Այս ցուցանիշները ձեռք են բերել քաղաքական, մակրոտնտեսական կայունութեան եւ կառավարութեան՝ բարեփոխումների ճանապարհին դրսեւորած հետեւողականութեան շնորհիւ: Դա շատերին դուր չի գալիս: Հասկանում եմ, որ որոշ հիստերիկ տրամադրութիւններ որոշ շրջանակներում պէտք է առաջանան, քանի որ կառավարութեան հրաժարականի, իշխանափոխութեան թեման նման ցուցանիշների պահպանման դէպքում անհասկանալի է դառնում:

-Ինչպէ՞ս էք գնահատում Ադրբեջանի կողմից ԵԱՀԿ Մինսկի խմբի առաջարկած գաղտնապահութեան սկզբունքի խախտումը եւ ինչպէ՞ս դա կազդի խնդրի հետագայ զարգացումների վրայ:

-Նախագահի մամուլի քարտուղարն այդ մասին արտայայտել է եւ ես ատելացնելու ոչինչ չունեմ: Յանկարծակի էր եւ անհասկանալի: Այն, ինչ որ հրապարակեց, հարցի կարգաւորման պատմութիւնն է, եւ ոչ թէ ներկան: Առնազն 1,5 տարի մենք այս տարբերակների շուրջ որեւէ քննարկումներ չենք ունեցել: Ի՞նչ նպատակով է դա արել՝ չգիտեմ: Միգուցէ հասարակական կարծիքը շօշափելու կամ այլ նպատակով: Կարծում եմ՝ ժամանակը ցոյց կը տայ դրա իրական նպատակները:

-Քանի՞ մարդ է տիրապետում կարգաւորման բանակցութիւնների տեղեկատուութեանը:

-Այդ շրջանակը փոքր է, բայց, անկասկած, երբ կոնկրետ պայմանաւորաւորութիւններ կը լինեն, ամբողջ ժողովրդին տեղեկ կը պահուի: Սա այն հարցը չէ, որի լուծումն իր վրայ վերցնի մէկ անձ կամ անձանց խումբ: Կրկնում եմ, Ղարաբաղի հարցի կարգաւորումը ոչ նախագահ Քոչարեանը, ոչ փոքր խումբ մարդիկ, երբեք միայն իրենց վրայ չեն վերցնելու:

-Ո՞ր՞շտ է, որ Փարիզում Ժակ Շիրակի միջնորդութեամբ կայացած նախագահներ Քոչարեանի եւ Ալի-

եւի հանդիպման ժամանակ առաջընթաց է արձանագրուել:

-Կարող եմ ասել, որ բանակցութիւնները կոնստրուկտիւ էին եւ հետաքրքիր: Նախագահ Շիրակը մեզ հետ մանրամասների մէջ խորացած մասնակցում էր այդ գործընթացին: Դա բաւական օգտակար էր նաեւ, որովհետեւ նման դէպքերում սկսում են գործել փաստարկները, այլ ոչ թէ ուզում եմ-չեմ ուզում մօտեցումը: Եթէ փաստարկ չունես, ուրեմն բան չունես ասելու: Նախագահ Շիրակը շատ ակտիւ խորհրդակցում է նաեւ նախագահ Պուտինի հետ: Ես եւս հանդիպումներից յետոյ հեռախօսազրոյցներ եմ ունենում նախագահ Պուտինի հետ: Ռուսաստանը եւս այս գործընթացի ակտիւ մասնակիցն է: Համաճախագահները շատ կոնստրուկտիւ են այս հարցում եւ միասնական են հանդէս գալիս:

-Ինչպիսի՞ն է Ռուսաստան-Հայաստան յարաբերութիւնների ներկան:

-Այդ յարաբերութիւնները վերելք են ապրում: Մաշինի երկրորդ կէսին ԱՊՀ հաւաքական անվտանգութեան պայմանագրի անդամ պետութիւնների դեկլարների գագաթաժողովին Հայաստանում կը լինի նաեւ նախագահ Պուտինը: Այս տարի սպասում է նաեւ Ռուսաստանի նախագահի պաշտօնական այցը Հայաստան:

-Ի՞նչ կարծիքի էք Պարոյր Հայրիկեանի՝ հոկտեմբերի 27-ի գոնեղի վերաբերեալ արուած յայտարարութիւնների մասին:

-Առողջ տրամաբանութիւն ունեցող մարդը՝ իմանալով Պարոյր Հայրիկեանի կենսագրութիւնը, պէտք է հասկանայ, որ նա չի կարող որեւէ մէկի խօսափողը լինել: Այն, ինչ նա ասել է հանգուցեալների անցեալի վերաբերեալ, վիրաւորական է նաեւ ինձ համար, քանզի իմ անցեալը եւս նոյնն էր՝ կոմերիտական, կոմունիստական եւ այլն: Սակայն կարծիք յայտնելու համար ասում եմ՝ այդ մարդուն ազատեք աշխատանքից: Նա ինձ մօտ չի աշխատում, այլ ընդամենը հասարակական կարգով յանձնաժողովի նախագահն է: Պատկերացնո՞ւմ էք, մարդու իրաւունքների յանձնաժողովի նախագահին հանրապետութեան նախագահն ազատում է կարծիք յայտնելու համար: Ինչպիսի արքայազն վիճակում կը յայտնուեն ես եւ ոչ միայն ես, այլ նաեւ երկիրը:

-Հոկտեմբերի 27-ի գործի դատավարութիւնը կը բացայայտի՞ դրա կազմակերպիչներին: Նրանք կա՞ն, թէ՞ ոչ:

-Դատը բաց է: 40-ից ատելի լրագրողներ են հաւատարմագրուել այն լուսաբանելու համար: Ես կարծիքս վաղուց ասել եմ: Ծառ քիչ քրեական գործեր կան, որոնք այսքան միութիւն ունեն: Բոլոր մասնակիցները կան, զենքը կայ, վկաները կան:

-Քաղաքական շահարկումներ կը լինեն՞:

-Ընդդիմութիւնը կամ դժգոհ մարդիկ կը փորձեն օգտագործել բոլոր առիթները քաղաքական շահարկումների համար: Ես չեմ զարմանում դրանից: Ես անբարոյական եմ համարում հոկտեմբերի 27-ը քաղաքական նպատակներին հասնելու համար շահարկելը: ■

²Ūà:ë, ÇÝãà:ë İ³Ū®

**Կոլիա Տեր Յովհաննիսեան  
Թեհրան, Փետրուար 2001**



Շատ է խօսել, քիչ է գրել Իրանի հիւրընկալ հոդում՝ Կասպից Ծովի կապուտակ ջրերի եզերքին տարածված «Հայկաշէն» անունը կրող զուտ հայկական գեղատիպ աւանի մասին, որն այս օրերին տօնում է իր հիմնադրման երեսուամեայ յոբելեանը: Ընդ որում խօսակցութիւնները եղել են հակասական դրական ու բացասական երանգներով, յաճախ ոչ անկողմնակալ, այնպէս, ինչպէս, թերեւս եղել է Արշակաւան քաղաքը կառուցելու օրօք, լոկ այն տարբերութեամբ, որ Արշակաւանը մարմնատրեց արքայական նախաձեռնութեամբ, իսկ այս աւանը՝ հայ կաթոլիկ մի հոգեւորականի թէ՛ նախաձեռնութեամբ, թէ՛ հեղինակութեամբ եւ թէ՛ անմիջական հսկողութեամբ... Այնուամենայնիւ, հակառակ գոյութիւն ունեցող բազմաթիւ նիւթական ու բարոյական դժարութիւնների, աշառու քննադատութիւնների ու բանասրկութիւնների, այս իւրօրինակ ինքնաբաւ աւանը գոյատեւել է, աճել է՝ ընդարձակել ու լայնարձակ Իրանի քարտեզի կենտրոնում յառնում է որպէս մի հայկական փոքրիկ քաղաք:

Արտառոց իրականութիւն է նաեւ այն հանգամանքը, որ մեր պարսիկ հայրենակիցները միշտ էլ հիացմունքով են խօսել ու խօսում են աւանի մասին աւելի՛ քան... հայերը, մենք: Ո՛վ ասես իրանմամբ կամ ոչ իրանմամբ չգնահատուց ու վեր չհանուց մեր գաղութում՝ ուսուցիչ, բանաստեղծ, ճարտարապետ, գործարար, միութիւններ, կազմակերպութիւններ..., սակայն Հայկաշէնը այնպէս էլ մնաց որպէս մի մեծ բացառութիւն... Իսկ մնան անարդարացի վերաբերմունքը գուցէ կարելի է մեկնաբանել լոկ «անճոռնի ճուտիկի» տարբերակով...

Չհաշուած մի քանի հանգստի կոչուած տարիքատուր գոյգերից, աւանում մնայուն բնակիչներ չկան: Արձակուրդներին ու ամառային սեզոնին աւանը կենդանանում է: Աւանի երկաթէ փակ դարպասը այդ օրերին անդադար քացում է ներս ընդունելու բնութեան գեղեցիկ տեսարաններով օժտուած լեռնային ճանապարհներով՝ առաւելապէս Թեհրանից ժամանած յոգնած ու դադրած տեղաբնակներին ու հիւրերին: Ծռնչալով քացում են գոց դռները, պատուհաններում առկայծում են լռսերը, փողոցներում յատնում են ծովափի կենաբար ու կազդուրիչ օդից ասես վերակենդանացած ու ճանապարհի յոգնութիւնը թօթափած՝ անց ու դարձ անող մարդիկ: Ուշ երեկոյեան օդում տարածում է հայկական աւանդական խորովածի անուշ բոյրը...

Այդուհանդերձ, աւանը զուտ հաճոյքի վայր չէ. այստեղ կայ եկեղեցի, մատուռ, զանազան մշակութային միջոցառումների համար նախատեսուած մեծ սրահ, Ֆուտբոլի, բասկետբոլի ու թենիսի գետիկներ եւ այլ մշակութային կառոյցներ, որոնց կամարների տակ յարատեւօրէն հնչել է հայ երգն ու խօսքը: Կայ նաեւ լողաւազան՝ բացօթեայ ճաշարանով ու նազախմբի փոքր բեմահարթակով, փակ ճաշարան, վաճառանոց, «Հարսնաշէն» ու

«Ճեմարան» անուն կրող կացարաններ ու նաեւ օտարերկրեայ հովեկների համար կառուցուած հիւրանոց: Սակայն թերեւս աւանի կառոյցների շարքի ամէնից խորհրդանշականն ու կարեւորագոյնը կարելի է համարել ճամբարային կացարանները: Այստեղ տարիներ շարունակ հիւրընկալել են հայ աշակերտ-ուսիւններ, ուսուցչական կազմեր, հիւանդապահուիկներ, Հայաստանի աղետալի երկրաշարժից տուժած որբ մանուկներ, մարզիկներ, գեղարուեստական զանազան համոյթների արուեստագետ-ուսիւններ եւ այլ հիւրեր: Իսկ Իրան-Իրաք պատերազմի ծանր օրերին, երբ Թեհրանը տնջում էր ուխտադրուծ թշնամու նենգաբար արձակած հրթիռների կրկնող պայթիւններից, աւանը իր դռները բացեց ապահով ապաստարան որոնող հազարաւոր թեհրանահայերի առջեւ: Յիշենք նաեւ, որ Հայկաշէնի առկայութեան շնորհիւ, որոշ չափով կասեցուց է իրանահայութեան տարերային արտագաղթը: Դա է վկայում աւանից ընդմիշտ հեռացած տեղաբնակների չնչին տոկոսն ու այն հանգամանքը, որ մեր հայ հայրենակիցներից ոմանք Հայկաշէնի շրջակայ աւաններում կամ հարեւանութեամբ հիմնել ու բնակում են մեծ թով ծովափնեայ կացարաններ:

Հայկաշէնը Հայաստանի մանրանկարն է, Հայաստանի պէս դեռ շատ թերի կողմերով բայց գրաւչութիւններով ու սիրելի, ոչ այնքան պերճաշուք՝ երբեմն նոյնիսկ անհրրապոյր, բայց տաքուկ ու հարազատ, սրտամօտ ու ցանկալի...

Չգիտես ինչու իրօք քիչ է գրել Հայկաշէնի մասին, քիչ է վեր հանել ու գնահատել իր դրոյթով այս գարնանալի հիմնադիր ու կառավարող անձանց թափած ջանքերը՝ ասես մի անգամ եւս փաստելու համար այն ճշմարտութիւնը, որ բարակ առուներն աւելի ձայնատու են քան մեծ գետերը...

Արդ, երբ աւանը այս տարի թեւակոխում է իր հիմնադրման ու գոյութեան երեսունէկերորդ տարին, ցանկալի է մի կողմ դնելով կողմնակալ ակնոցները, աւելի անաչառ ու իրատեսական հայեացք ձգել՝ համայն Սփիւռքում իր մնանը չունեցող եւ Իրանահայ գաղութին պատիւ բերող՝ ծովափնեայ այս փոքրիկ ու իւրօրինակ քաղաքի վրայ՝ ըստ կարելոյն արժեւորելու եւ գնահատելու այն՝ այնպէս ինչպէս կայ: ■

## Սաչքառ համար 15-ի լուծուած տարբերակ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	ա	գ	ա	տ	վ	շ	տ	ու	ն	ի	■	ա	ի	ե	լ
2	կ	ա	ռ	ա	տ	ա	ր	■	ա	ս	տ	դ	■	գ	ի
3	ս	տ	ա	ն	ա	լ	ի	ք	■	կ	ռ	ա	ն	ա	լ
4	ե	ա	կ	■	կ	ա	թ	ի	ն	■	գ	■	ս	կ	ի
5	լ	ն	ե	լ	■	կ	ու	ճ	■	■	■	ա	ն	տ	ի
6	թ	ա	լ	■	ճ	■	գ	ի	շ	■	գ	■	ա	■	ու
7	ա	լ	■	■	■	ա	ա	■	■	■	■	ա	ն	ն	կ
8	կ	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
9	ու	տ	ե	ս	տ	■	ր	■	■	■	■	■	■	■	■
10	ն	ու	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
11	գ	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
12	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
13	ն	ա	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
14	ա	ր	ա	գ	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
15	տ	ի	կ	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■

## «ԾՅՅ՝ՆԻ» «ԷձՇ ԿԵՅՅ՝Ի ձՕՄ ՆՅՍՅՕՅՍՅ՝Է»

*Ինչ էր առաջարկում Գորլը, եւ ինչու  
ենք հետտերիայի մէջ ընկել*


*(Ազգ օրաթերթ 01.11.2000)*

Ջէյմս Բէյքերի ինստիտուտի տնօրէն, ամերիկահայ նշանաւոր դիւանագետ, դեսպան էրարդ Ջերեջեանը այս տարւայ մայիսին «Մեդիամաքս» գործակալութեանը տըւած հարցազրոյցում ասում է. «Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը չի կարող կարգաւորուել արտաքին ուժերի կողմից: Երբ 1999թ. սկզբին այցելեցինք Երեւան եւ Բաքու, ես համոզուեցի, որ հակամարտութեան կարգաւորումը բանակցութիւնների մէջոցով հնարաւոր է: Բանակցային սեղանին եղել են տարբեր մօտեցումներ, որոնց շարքում քննարկուել են «ազատ ասոցիացիայի» կամ տարածքների փոխանակման տարբերակները»:

Տարածքների փոխանակման տարբերակները կամ հայաստանեան ներկայ քաղաքական բառասպաշարով ձեւակերպւած՝ Մեդրին Լաչինով փոխանակելու գաղափարը, որը հայ ժողովրդի համար անընդունելի է, շըրջանառութեան մէջ դրեց 1992թ. յունւարին, ԱՄՆ պետ-քարտուղարութեան նախկին ԽՍՀՄ գծով յատուկ խորհրդական Փոլ Գորլի կողմից: Գրեթէ ինը տարի Գորլի ծրագիրը տարբեր մոդիֆիկացիաներով դարաբաղեան խաղաղ բանակցութիւնների սեղանին է, այդ մասին յստակ տեղեակ են եղել եւ Երեւանում, եւ Ստեփանակերտում, եւ Բաքում: Յատկապէս վերջին մէկ ամսւայ ընթացքում Գորլ անունը հայերիս մէջ միայն բացասական զգացմունքներ է առաջացնում, այս մասին խօսում են եւ «նախկինները», որոնք պատրաստ էին ամբողջ Ղարաբաղը թողնել Ադրբեջանի կազմում, եւ «ներկաները», որոնց չափից շատ գաղտնապահութիւնը միայն տազնաս, անհանգստութիւն ու նեարդայնութիւն է առաջացնում, եւ «նախկիններից» չզանազանող Աշոտ Մանուչարեանը, որը ժամանակին չընդդիմացաւ Աշոտ Բլէյեանի «նորուղիականութեանն» ու Բաքու ուխտագրեանցութեանը, եւ Դաւիթ Շահնազարեանը, որը «ղարաբաղցի», «Քոչարեան», «Մեդրի» անուններից շիզոֆրենիայի ախտանշաններ է դրսեւորում... Մենք, իսկապէս, չգիտենք, չենք պատկերացնում, թէ տարածքների փոխանակման տարբերակը կամ տարբերակները ինչ լըջութեամբ են քննարկուել միջնորդների, Քոչարեան-Ալիեւ հանդիպումների ընթացքում: Միանշանակ կարող ենք պնդել, որ գոնէ այսօր, երբ իւրաքանչիւր հայ իր պարտքն

է համարում բողոքել «Մեդրին ծախելու դէմ», հարցը շահարկում է գուտ քաղաքական նպատակներով, հասարակութեան մէջ անեղորդ լարածութեան եւ փսիխոզի մթնոլորտ է ստեղծում՝ հեռայար նպատակով, տեսէք, «Քոչարեանը դարաբաղցի է», «Քոչարեանը զաւթել է իշխանութիւնը», «Քոչարեանը ծախելու է Ղարաբաղը»: Այս առումով, անկասկած, հարցը շահարկողները յաջողութիւնների հասել են, ձեւաւորել է հասարակական կարծիք, Մեդրիում բնակիչների շրջանում տիրում է յուսալըութեան, անտէրութեան զգացում: Մա արդէն իսկ չափազանց վտանգաւոր է, եւ մեր ունեցած տեղեկութիւններով, խայծը նետել է Ռուսաստանը, արեւի ճիշտ ռուսաստանեան ինչ-ինչ ուժեր Աշոտ Մանուչարեանին քսի են տել, իսկ նա առանց գիտակցելու, որ այդ դէպքում թունաւորում է ոչ թէ Քոչարեանին, այլ յատկապէս Մեդրիի ժողովրդին, խանդավառւած ճղճում է:

Յունիսի 8-ին, երբ Փոլ Գորլը տարածքների փոխանակման նոր առաջարկ ներկայացրեց, հայաստանեան մամուլը գրեթէ չանդրադարձաւ դրան, եթէ չեն սխալում, «Ժամանակը» գրեց ապա՝ «Ազգը»: Համաձայն չեն «Ազգի» զլխաւոր խմբագիր Աւետիքեանի տեսակետին «Ոչ ոքի մտքով չանցաւ նշել, որ Գորլը միջին մակարդակի նախկին «խորհրդական» է եղել, եւ նրա առաջարկներն այնքան էլ արժէքաւոր չեն: Մենք չկարողացանք տարբերակել ինչ-որ ոչնչութեան անձնական կարծիքը երկրի կամ պետութեան կարծիքից, դրանով էլ թոյլ տուցինք, որ Ղարաբաղի բանակցութիւններում փոխանակ մեր կողմից մշակւած հարցերի, նրա տարբերակը մտնի օրակարգ՝ Մեդրին Ղարաբաղի հետ փոխանակելու տեսքով»: Վաշինգտոնը պաշտպանել է Գորլի ծրագիրը, յատկապէս ըսկըզբնական շրջաններում, երբ խօսք չէր կարող լինել ԱՄՆ-Իրան բըմամական յարաբերութիւնների վերացման մասին: Այսօր էլ Վաշինգտոնը դարաբաղեան բանակցութիւնների ընթացքում, որպէս այլընտրանքային տարբերակ, շրջանառութեան մէջ է դնում տարածքների փոխանակման տարբերակը ոչ այնքան կեանքի կոչելու, որքան բանակցային կողմերի կարծիքը «զոնդաժելու» նպատակով:



Վատահ են, տարածքների փոխանակման տարբերակը շահարկողներն այնքան էլ լաւ չեն պատկերացնում դրա էութիւնը, համարձակւում են ասել տեղեակ չեն: Եւ պէտք էլ չէ տեղեակ լինեն, որովհետեւ հարցը քաղաքականացում է, իսկ ճղճացողների նպատակը ոչ թէ հարցի լըջութիւնն է այլ թողած հետագիծը:

### Ինչ էր ասում Գորլը 1992 թ. յունւարին

Գորլը կարծում էր, որ դարաբաղեան հակամարտութեան լուծման 3 տարբերակ կայ՝

## Հասարակական

1.Ղարաբաղի հայերին ստիպողական արտագաղթի մղել, ընդդիմանալու դեպքում՝ կոտորել:

2.Միջազգային ուժերի օգնությամբ հայերին եւ ադրբեջանցիներին միմեանցից հեռու պահել:

3.Ղարաբաղը միացնել Հայաստանին:

Երեք տարբերակներն էլ տեսական են, անիրագործելի, որովհետեւ՝

Առաջին տարբերակը բարոյական եւ մարդասիրական առումով ամենար է: Երկրորդ տարբերակը ամենար է Ֆիզիկապէս, չափազանց դժար է տարիներ շարունակ զսպող ուժեր պահել: Երրորդ տարբերակն ամենար է քաղաքական առումով, քանզի Ադրբեջանը դուրս է պարտուած վիճակում:

Ահա սա էր առաջարկում Գորը 1992-ին: Տարիների ընթացքում նա հասկացաւ, որ անկախ նրանից, թէ Հայաստանում եւ Ադրբեջանում ինչ ուժեր կը լինեն իշխանութեան գլուխ, ամենար է երեք տարբերակներից որեւէ մէկը կեանքի կոչել եւ

### 2000 թ. յունիսին Գորըն առաջարկեց

Որ գաղափար ընդունելով մախկին սխալները: Նախկին դիւանագետը, այսօր «Ազատութիւն» շափոկայանի վերլուծաբանն ասում է. «Հայերի համար Իրանի հետ սահման ունենալու կարելոթիւնն անզնահատելի է: 1992թ. Հայաստան-Իրան արտօճանապարհով առետուրը շատ քիչ էր, եւ ես կարծում էի, հայերը Մեդրին յամուն խաղաղութեան կը զոհարեբեն, դրա դիմաց ստանալով Լաչինը: Բայց այժմ ես հասկանում եմ դրա հոգեբանական իմաստը, դա կարելու է ոչ միայն առետուրի հետագայ զարգացման համար, այլ մանաւանդ որպէս ելք՝ դէպի ոչ թուրքական աշխարհ: Ես այդ ժամանակ թերագրմահատել էի այդ հանգամանքը: Եթէ այժմ այդ ծրագիրը վերանայեն, պիտի առաջարկեն, որ Ադրբեջանը մախ գիջի Նախիջեւանի արեւմտեան մի փոքր մասը, որպէսզի Հայաստանը սահման ունենայ Իրանի հետ, եւ ապա Թուրքիան Հայաստանի առաջ իր սահմանները բացի»:

Այսպէս, ըստ Գորի վերջին առաջարկի, Հայաստանը Մեդրի մի հատաւծը, Արաքս գետի երկարութեամբ (48 կմ) յանձնում է Ադրբեջանին, Ադրբեջանը Լաչինի միջանցքը դէ իրէ յանձնում է Հայաստանին, ինչպէս նաեւ Նախիջեւանի Հանրապետութեան ծայրագոյն հիւսիսի մի հատաւծ:

### Քաղաքական քարտեզը ըոր տեսք է ստանում.

1.Ադրբեջանը ցամաքային ճանապարհով միանում է Նախիջեւանին:

2.Հայաստանը Լաչինի միջանցքով միանում է ԼՂՀ-ին այժմ էլ միացած է, այն տարբերութեամբ, որ Ադրբեջանը դէ իրէ հաստատում է դէ Ֆակոս առկայ վիճակը:

3.Հայաստանն Իրանին միանում է 48 կմ-անոց ցամաքային ճանապարհով Արարատի մարզում, ընդ որում 9 կմ-ը՝ Թուրքիա-Նախիջեւան շփման հատաւծում, մնացելը՝ Իրան-Նախիջեւան շփման հատաւծում:

4.Թուրքիան զրկւում է Նախիջեւանի հետ սահմանից:

5.ԼՂՀ-ն միանում է Հայաստանին կամ դառնում անկախ պետութիւն:

Ըստ Գորի առաջարկի, մտաւորապէս վերոնշեալ պատկերն է ստացւում, դետալները համաձայնեցւում են բանակցութիւնների սեղանի շուրջ, փոխզիջումներով:

### Առաջարկը անընդունելի է հաւասարապէս

Հայաստանի, Ադրբեջանի, Թուրքիայի, Իրանի, Ռուսաստանի համար:

Հայաստանը չի կտրւում Իրանից, ինչը չափազանց կարելու է եւ Հայաստանի եւ Իրանի համար: Սակայն հայ-իրանական ըոր սահմանը չափազանց խոցելի է. գտնւում է քրոպարակ շրջանում, անմիջապէս Թուրքիայի քթի տակ է: Ունի նաեւ գրաւիչ կողմ՝ Երեւան-Թեհրան ճանապարհը կարճանում է, խուսափում ենք Իրանի ազերբայճան շրջանները հատելուց:

Իրանը կտրականապէս դէմ է հասկանալի պատճառներով. Մեդրին Իրանի համար գրեթէ այն մշակակութիւնն ունի, ինչ Հայաստանի համար: Մեդրին զիջելու դեպքում Նախիջեւանը կապւում է Ադրբեջանին, Թեհրանը զրկւում է Բաքի վրայ ազդելու կարելուրագոյն լծակից, Նախիջեւանն այլեւ Իրանի ազդեցութեան շրջանակից դուրս է մնում:

Ադրբեջանի համար էլ է անընդունելի, դէ իրէ կորցնում է Ղարաբաղը, ինչն առաւել դժար է հոգեբանական տեսակէտից: Դիշտ է, Բաքուն հնարաւորութիւն է ունենում ցամաքային ճանապարհով կապել Նախիջեւանին, բայց զրկւում է արիւնակից Թուրքիայի հետ 9 կմ-անոց սահմանից:

Թուրքիան կտրականապէս դէմ է. ԼՂՀ-ն անկախանում կամ միանում է Հայաստանին, կտրւում է Նախիջեւանի հետ ցամաքային սահմանից: Եթէ ընդմիակ պատկերացնենք, որ Թուրքիան հրաժարել է համաթուրանականութիւնից, ապա այս տարբերակին համաձայնելու դեպքում Անկարան թուրքական աշխարհում կորցնում է կշիռը:

Ռուսաստանը եւս դէմ է: Առաջին հերթին այն պատճառով, որ ծրագրի հեղինակը տարածաշրջանում իր մըրցակից ԱՄՆ-ն է: Բացի այդ, եթէ բացւում է հայ-թուրքական սահմանը, ռուսական սահմանապահների Հայաստանում մնալը դառնում է անիմաստ:

Այսպիսով, տարածքների փոխանակմանը դէմ են տարածաշրջանում շահեր ունեցող երկրները թերեւս, բացի ԱՄՆ-ից: Նման պայմաններում անհասկանալի է՝ ինչպէ՞ս կարող է «Զոչարեանը ծախել Մեդրին»:■

### Թաթուլ Յակոբեան

«Ազգը» համամիտ չէ յօրաւծագրի տեսակէտների մի շարք վիճելի հարցերում եւ ոչ այնքան հիմնաւորած մեկնաբանութիւններում:

### Յայտարարութիւն

Ի տեղեկութիւն մեր արտասահմանի յարգարժան բաժանորդներին տեղեկացնում ենք, որ որոշ տպագրական եւ այլ ծախսերի յաւելման պատճառով այսուհետեւ արտասահմանեան բաժանորդագիրը մի տարւայ համար սահմանւում է՝ 50 ԱՄՆ դոլար:



**Թուրք պատմաբանի կարծիքը**

## **Հալիլ Բերքթայ. «Մենք պետք է հոգեբանօրէն հասունանանք»**

*(Ազգ օրաթերթ, 24.11.00)*

*Վերջերս «Ազգ»-ում հրատարակեց «Նոյեան տապանի» տեղեկատուութիւնը Ֆրանսիական «Էքսպրես» շաբաթահանդէսին թուրք պատմաբան Ստանբուլի «Սարանջի» համալսարանի պրոֆեսոր Հալիլ Բերքթայի տւած հարցազրոյցի մասին, որտեղ նա արտասայտուում է 1915 թ. Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ ողջ ճշմարտութիւնն ասելու օգտին. թէն ինքը խուսափում է օգտագործել «ցեղասպանութիւն» բառը:*

*Ստորեւ կրճատ ներկայացնում ենք այդ հարցազրոյցը:*

- Ինչո՞ւ հէնց այս լարած պահն ընտրեցիք հրատարակային ելոյթի համար:

- Կարծում եմ, մենք պարտաւոր ենք ձերբազատուել 1915թ. իրադարձութիւնների հետ կապւած տարու-ներից: Ես խօսեցի, որպէսզի լեզուները՝ բացեն: Կարծում եմ, իրավիճակը կը փոխի: Տասնամեակներ ի վեր օրօրոցային երգելով քնեցնում են Թուրքիայի հանրութեանը: Սակայն տոննամներով փաստաթղթեր կան, որոնք ապացուցում են տխուր իրողութիւնը. դիւանագէտների զեկուցագրեր, անձնական գրառումներ, Օսմանեան կայսրութիւնում հաստատուած քրիստոնէական եկեղեցիների ներկայացուցիչների Արեւմուտք հասած վկայութիւններ, լուսանկարներ... Ես ինքս լաց եմ եղել ի տես որոշ լուսանկարների: Թուրքիայում երիտասարդները մեծանում են փակ աւօթում: Հետագայում ոմանք արտասահմանում ուսանելիս բացայայտում են իրողութիւնը: Ինձ համար Ելլի համալսարանում կատարուած այդ բացայայտումը ցնցող եղաւ: Մենք խօսում ենք տասն ամսում առնուազն 600 հազար անձանց մահուան մասին: Եթէ ռասիստ չենք, ապա պարտաւոր ենք խորութեամբ զգալ այդ սարսափները:

- **Պնդո՞ւմ էք, թէ երիտթուրքերի կառավարութիւնը ցեղասպանութիւն է գործել:**

- «Յեղասպանութիւն» տերմինն իրաւաբանական սահմանում է: Իսկ ես պատմաբան եմ եւ փորձում եմ ըմբռնել 1915թ. մինչեւ Օսմանեան կայսրութեան անկումը տեղի ունեցած ահաւոր դէպքերը:

- **Ձեր կարծիքով Թուրքիայի Հանրապետութիւնը պէ՞տք է ներողութիւն խնդրի տեղի ունեցածի համար:**

- Երիտթուրքական շարժումն աւարտեց 1923թ. հանրապետութեան ստեղծումով: Եթէ դրա հիմնադիր Մուստաֆա Քեմալը յաջողութեան հասաւ, դա մասամբ այն պատճառով էր, որ նա պատերազմի ժամանակ իրեն հերոսի պէս էր պահել, մասամբ էլ այն պատճառով, որ նա կապ չուէր Հայկական հարցի հետ: Երիտթուրքերի ազգայնականութեան վարկաբեկման պատճառով էր, որ քեմալական տարբերակը գեր-իշխեց իր ընդհանրական սկզբունքների եւ արեւմը-տամէտ արժէքների շնորհիւ: Այս ամէնը նկատի ունենալով, կարծում եմ, որ



ներկայիս հանրապետութիւնը չպէտք է ներողութիւն խնդրի:

- **Դուք պնդում էք, թէ հայերի բնաջնջումն իրականացրել է «Միութիւն եւ առաջադիմութիւն» կոմիտէին կապուած մի գաղտնի կազմակերպութիւն՝ երիտթուրքերի կուսակցութիւնը: Կա՞ն արդեօք**

**հրամանի ապացոյցներ:**

- Ակնյայտ է, որ գաղտնի կազմակերպութեանը տրուած հրամանը չէր կարող գրաւոր լինել: Այդուհանդերձ, բազմաթիւ նշաններ վկայում են այդպիսի հրամանի գոյութիւնը: Վարչապետի ազգային արխիւների ծառայութեան հրատարակած «Հայերն օսման-եան վաւերագրերում» աշխատութեան 69-րդ էջում այն ժամանակայ ներքգործնախարար Թալէաթ փաշայի հեռագիրն է՝ ուղղուած Դիարբեքիի նահանգապետին: Հեռագրում Թալէաթն ասում է, թէ ինքը տեղեկացել է, որ Մարդինի շրջանի բոլոր քրիստոնէաները բնաջնջուել են: Նա պահանջում է, որ հայերի նկատմամբ ձեռ-նարկուած ապահովական միջոցները չկիրառեն քրիստոնէայ միւս համայնքների հանդէպ: Չնայած հեռագրի երկիմաստ խօսքերին, կարելի է եզրակացնել, որ Թալէաթն այդպիսով կարգադրում էր շարունակել հայերի բնաջնջումը:

- **Թուրքիայի իշխանութիւններն անկէ՞ղծ են արդեօք, երբ պահանջում են, որ այդ թեման թողնի պատմաբանների գնահատմանը:**

- Դա լոկ բարի մտադրութիւնների յայտարարութիւն է: Բայց իրականում պատմաբաններին թոյլ չեն տալիս կատարել իրենց աշխատանքը: Այս տարւայ մարտին Չիկագոյում թուրք եւ հայ պատմաբանները կարողացան ընդհանուր լեզու գտնել: Մեր յաջողութեան պատճառն այն էր, որ մենք չէինք բանակցում եւ մեր երկրների ներկայացուցիչները չէինք:

- **Կարծո՞ւմ էք, թէ մի օր Թուրքիայում Հայկական հարցի հետ կապուած արգելքը կը վերանայ:**

Մենք դրան կը հասնենք, եթէ ապրենք ազատ հասարակութեան մէջ: Միայն այդ պայմանով կը կարողանանք ընդունել 1915թ. սարսափների իրողութիւնը: Մենք պէտք է հոգեբանօրէն հասունանանք, քանի որեւէ հնարաւորութիւն չունենք աշխարհին համոզելու իրադարձութիւնների մեր տարբերակի ճշմարտութիւնը: ■

**Յտարարութիւն**

Յարգարժան ընթերցողների ուշադրութեանը ներ յանձնում  
իրանական ամանորի (Նովրուզ) արձակուրդի պատճառով «Լոյս»-ի յաջորդ համարը լոյս կը տեսնի ապրիլի 23-ին:

*Խմբ.*

# Արտազ-Մակու գաւառը եւ սուրբ Թադէի վանքը

## Աշխարհագրութիւն

Վասպուրական նահանգի 35 գաւառներից 15-րդը կոչում է Արտազ՝ 2225 քառակուսի կիլոմետր տարածութեամբ, որ գտնուում է Մասիս լեռնագագաթի հարաւ արեւելեան ստորոտում:

Ուրարտական արձանագրութիւններում Արտազը անանում է Ուլթուգա (Ultuza):

Արտազի մասին յիշատակութիւններ ունեն Եղիշէն, Փարպեցի, Խորենացի, Յովհ. Մամիկոնեանը, Սեբեոսը, Թ.Արծրունին, Մ.Կաղանկատացի Յովհ. Դրասխանակերտցի, Ղեւոնդ Վարդապետը եւ ուրիշներ:

Եղիշէն եւ Փարպեցի այն կոչում են Արտազ:

Ըստ Խորենացու գաւառը նախ կոչել է Շաւարշան, Շաւարշական ապա նաեւ Արտազ. նա Արտազի բնակչութեանը համարում է Ալանաց տոհմից՝ գաղթականներ, որ Արտաշէս թագաւորի հրամանով բնակութիւն են հաստատում Մասիս լեռան հարաւ արեւելեան կողմում եւ

բնիկ աշխարհի՝ Ալանաց երկրի տեղանունով կոչում նոր բնակավայրը. «Եւ հրամայեալ Արտաշիսի բնակեցուցանել զընտասի հարաւայ յարեւելից կուսէ Մասեաց, որ կոչէր Շաւարշական գաւառ, ի վերայ պահելով զբնիկ անունն Արտազ. քանզի եւ աշխարհն՝ ուստի գերեցանն Արտազ կոչի մինչեւ ցայսօր ժամանակի»: (Պատմ. Հայոց, Վենետիկ, 1853 էջ 270).

8-րդ դարի պատմիչ Ղեւոնդ Վարդապետը իր «Արշաւանք արարաց ի հայս» գրքում յիշատակում է թէ Արտազ եւ թէ Մակու անանումները: Սեբեոսն էլ գործ է ածում երկու անունները միաժամանակ:

9-10-րդ դարերի պատմիչ Թովմայ Արծրունու «Պատմութիւն տանն Արծրունեաց» գրքի ձեռագիր տարբերակներում Արտազ գաւառն անանում է նաեւ Արդոզական, Արդազական. նա յիշատակում է նաեւ Մակու անանումը:

Յ. Դրասխանակերտցին յիշատակում է միայն Արտազ անանումը, բայց ոչ Մակուն:

13-րդ դարի պարսիկ պատմագիր Հանդրուլահ Մուտեֆին իր նշանաւոր «Նոզհա» ալ կոլուբ (Մրտերի վայելք) պատմա-աշխարհագրական գրքում Արտազը կոչում է Մակույէ ( ):

Մակուն կոչել է նաեւ Կապան-Կալէսի. այս անանմանը հանդիպում ենք այն բանաստեղծութեան մէջ, որ Շահ Աբբասը փորագրել է տել քաղաքի ապամածի վրայ:

Հ.Ղ. Ալիշանը «Տեղագիր Հայոց Մեծաց»-ի մէջ Մակու գաւառը կազմած է համարում Ալէ եւ Արտազ գաւառա-

## Սերոժ Թիւհմեան

ներից» Ի հմունն Ալէ եւ Արտազ գաւառք էին յերկրի աստ». Ի դէպ նա «Հայաստանի» Բ. հատորի (Վենետիկ 1910 էջ 62) տողատակի բացատրութեան մէջ հաւանական է համարում, որ գաւառը Շաւարշան կամ Շաւարշական է կոչել՝ «Գուցէ անումար Հայկազն պայազատաց մէկուն, որ կոչուէր Շաւարշ»:

Կ. Կոտանեանցը «Հիսուած քանից նախնի պատմագրաց Հայոց» (Վիեննա 1877) աշխատութեան երրորդ գլխում, Արտազ գաւառի սահմանների մասին տալիս է հետեւեալ տեղեկութիւնները. «Վասպուրականի գաւառներից մէկն էր Ե դարում: Այս գաւառին սահմանակից էին հիւսիսից հին Մասեացուն՝ արդի Սուրմալուայ Գաւառակը, արեւելից Երասխը Շարուրայ դաշտով, հարաւից արդի եւ հին Մարանդ ու Հեր Գաւառները, իսկ արեւմուտքից հին ժողկոտն գաւառն՝ արդի Բայազիդու վելայէտը: Արդի Մակուայ խանութիւնը հին Արտազի մի մասն է Մակու գետի վերայ»:

Մակու գաւառը վերջին դարերում բաժանած է եղել մի քանի գաւառակների. այդ գաւառակներն են եղել, հիւսիսում՝ Մակու կամ Բայեաթ, Աղգեօլ, Մասիսկող. արեւելքում, Չայխարա, Դարաշան կամ Շամբիճոր, Գարագոյուն. Հարաւում՝ Բարաջուք, Թամաշէք, Սեօքմանաւա. արեւմուտքում՝ Աւաջուղ, Չարդերուն կամ Չհար-Դերուն: Վերջին երկու գաւառակները Մակուից անկախ, կառավարել են տարբեր խաների ձեռքով:

Բարաջուքը Չարդերունի եւ

Մակուի միջեւ է գտնուում : Այս գաւառակում է Ս. Թադէի հռչակատը վանքը:

Աւաջուղը գտնուում է Բայազէտի մօտ, տաճկաց սահմանին կից, ուր ապրել են այրուցիներ: Աւաջուղի խաները ռուս-պարսկական պատերազմից յետոյ գաղթել են Ալէքսանդրապոլից եւ բնակել են հայերին պատկանած վայրերում: Ռուս-թրքական պատերազմի ժամանակ հիւրընկալել ու պաշտպանել են փախստական հայերին, մասնաւորաբար բայազէտցիներին: Աւաջուղը մինչեւ 19-րդ դարի սկիզբներն էլ հայաբնակ էր եւ շէն. տեղացիները այնքան հարուստ են եղել, որ նպաստել են Ս. Թադէի վանքի նոր շինութեանը: Աւաջուղում է գտնուում Քիլիսէ Քեանդի գիւղը: Աւաջուղի դաշտի ու լեռների վրայ գտնուել են աւերակներ, բերդեր, պարիսպներ, գերեզմաններ, խաչքարեր եւ խաչեր: Աւաջուղում, Աղշայ գետի աւազանում է գտնուում Աւաջիղ դաշտը. ենթադրում է որ այն նոյն Աւարայրի դաշտն է:■



Արտազ Գաւառը

# Մշակոյթ

Մետրաբալայեան  
Ղոկտոր-պրոֆեսոր  
թարգմանիչ՝ ճարտ. Նիկիտ Սիրգայեան  
թարգմանած Թեորանում լոյս տեսնող «Փէյման»  
պարսկերէն պարբերականից (թիւ 2)

àñáß³ ÌÝ³ ñĪÝ»ñ  
ŞP³ ÑŸ³ Û; ù »ñ¹ áí èÇ! ¼á áèÇ  
í »ñ³ µ»ñ»³ Ē Á³ Û³ Ý³ Ī³ ĪÇÓ  
Ñá. »µ³ ÝáóÃ»³ Ý ì »è³ ÝĪÇóŸÇÓ



Ի՞նչ է նշանակում դիւցազներգութիւն, եւ ժամանակակից գիտական հոգեբանութեան ի՞նչ հիմունքների եւ օրինաչափութիւնների հիման վրայ է կարելի դա վերլուծել եւ բացատրել:

Դիւցազներգութիւնը, հերոսական վիպերգութիւն է, որը միախառնած է, գործողութիւնների, դէպքերի, արտառոց ու զարմանահրաշ եւ չափազանցած իրադարձութիւնների հետ: Իսկ հոգեբանութիւնը ի՞նչ է ասում այդ մասին: Ամփոփենք հետեւեալ կերպով:

Մարդ արարածը, բնագոյաբար հաճոյք է ստանում զարմացնելուց եւ զարմանալուց, որոշ իմաստով, մարդը բնագործն հակած է զարմանալի ու զարմանահրաշ բաներին, նոյնիսկ՝ չափազանցութիւններին: Ակնյայտ է, որ սա չի կարող որեւէ մի ազգի դիւցազներգութեան գոյացնելու միակ պատճառը հանդիսանալ: Գոյութիւն ունեն նշանակալից ուրիշ ազգակներ եւ: Օրինակ՝ պատմական, քաղաքական, հասարակական, աշխարհագրական, եւ փիլիսոփայական, որոնք չեն արժարժելու ներկայ յօդածում: Իսկ ինչ վերաբերում է անհատի հոգեբանութեանը, պէտք է նշել որ, որեւէ անհատ, ենթադրենք տառապում է մի անբուժելի հիւանդութիւնից, եւ բոլոր բժիշկները նրան պատասխանել են, ակնյայտ է որ, նա մատուցելով վախի եւ յուսահատութեան հոգեվիճակին, բոլոր միջոցների կը դիմի, փնտռելով որեւէ բուժում, մի ինչ որ հրաշքով: Միեւնոյն խնդիրը ճիշտ է նաեւ, հոգեբանական ոլորտում, զանազան ազգերի ու ցեղերի մօտ: Յաճախ, դիւցազներգութիւնը ստեղծում է այն ժամանակ, երբ որեւէ ազգ կամ ցեղ, ապրում է իր պատմական ճգնաժամային ժամանակահատուածներից մէկը: Միւս կողմից, թատերգութիւնն ու ներկայացումը եւ, մաս են կազմում մարդու էութեան եւ բնոյթին: Մենք բոլորս մանկութեան շրջանից հետաքրքրութիւն ենք ցուցաբերում դէպի թատրոնը եւ ներկայացումը, եւ մինչեւ մեր կեանքի աւարտը, բոլորս անխտիր, ինչ որ չափով դեր ենք խաղում: Նկատէք փոքրիկ երեխաներին, թէ նրանք ինչքան են սիրում յանկարծակիի գալ (նոյնիսկ մի քանի ամսական հասակում): Ծնողները կամ ընտանիքի ուրիշ անդամները, նրանց հետ աջակապուկ են խաղում: Երեխան սիրում է որ, հասակաւորը կամ իր խաղընկերը, սիւնի հետեւից դուրս թռչի եւ իրեն իբր յանկարծակիի բերի<sup>1</sup>: Այսպէս վերոյիշեալ նախաբանին, որը կարելու ազգակներից է համարում դիւցազներգութեան ծագումնաբանութիւնը ներկայացնելու համար, վերջակէտ դնելով անցնում ենք Ֆերդովսուն: Չնայած որ այս խնդրի աւելի երկար բացատրութիւնը իր տեղին, շատ կարելու ու հետաքրքիր կարող է լինել:

«Շահնամ» դիւցազնավէպը, ընդհանուր առմամբ բաղկացած է չորս առանցքային կողմերից: 1)Դիւցազներգական 2)Իգիթային 3)Ռազմական 4)Մէջլիսային: Առաջին բանը, որ կարելի է ասել Ֆերդովսու դիւցազներգութեան մասին հոգեբանական տեսանկյունից, հետեւեալն է. սկզբից մինչեւ վերջ, մարդկային բնական ու իրական հոգեմտայնութիւններն են իշխում ընդհանրապէս, այսինքն սա մի ոլորտ է, որ իր մէջ ներառում է ուշիմութիւն, տրամաբանութիւն, ողջմտութիւն, եւ տարածում է մինչեւ զգացմունքներ ու յոյզեր: Շահնամում անհատականութիւնները խօսում են ըստ իրենց հոգեվիճակի, եւ վարում համաձայն ժամանակի պայմանների: Ոչ մի անհատի աւելորդաբանութեան, չափազանցութեան, ոչ մի անհայատակ եւ ոչ տրամաբանական տարրեր, որ անախորժ լինեն եւ հոգեբանօրէն համոզիչ չլինեն չեն նկատում: Իրապաշտութիւնն ու հաւասարակշռութիւնը գերիշխում են բոլոր իրադարձութիւններում: Նոյնիսկ չափազանցութիւնները համընկնում են տուեալ ժամանակի ու տեղական պայմաններին եւ բանաստեղծութեան տեսակին (դիւցազներգութեան), եւ այնքան գեղեցիկ ու նուրբ ոճով է արտայայտած, որ չի խախտում ողջմտութեան սահմանները: Որտեղ որ անհրաժեշտ է, շեշտ դրում է բառերի վրայ, օրինակ՝

Ո՞վ ասաց, գնա, շոթայիր ձեռքը Ռոստումի,  
Ինձ չի շոթայի, երկինք ու երկիր:

Ֆերդովսու նկարագրութիւնները այնքան գեղեցիկ, կենսունակ, ճշգրիտ, շարժուն ու պատկերաւոր են, որ կարելի է դրանք դիւրութեամբ թոթի վրայ պատկերել: Հերոսների զգացմունքներն ու փոքորկալից յոյզերը բնութագրելիս, ամենայն վարպետութեամբ օգուտելով պարսից լեզուի հարուստ շտեմարանից, Ֆերդովսին խօսում է խիզախ ու անպաճոյճ, ի դէպ կատարելապէս պահպանելով բարոյական չափանիշները: Այս առումով բաւական է ընթերցել այն էջերը, ուր նկարագրում են «Միաւոշ»-ի ու «Մուղաբ»-ի հանդիպումը, «Քէյքաուս»-ի արքունիքում, կամ «Ռոստոմ»-ի պատասխանը, «Քէյքաուս»-ի անտրամաբանական քննադատութիւններին: Դիւցազն «Ռոստոմ»-ը, այս տեսարանում հանդէս է գալիս շատ կուռ, բանական ու համեստ, ինչպէս մի հմուտ փաստաբան ու ճարտասան:

Ֆերդովսին, իրատես է ու իրապաշտ: Իր հայեցողութեամբ, մարդ էակը, ինչքան էլ որ լաւ ու բարձր բարոյականութեամբ հագեցւած լինի, վերջապէս մարդ է եւ իրապատուկ պայմաններում կարող է զայթակղուել եւ շեղումներ ունենալ: Նոյնիսկ, «Ռոստոմ»-ն ինքը, որ դիւցազներգութեան իսկական ու կենտրոնական հերոսն ու խորհրդանշանն է, եւ Ֆերդովսու հայեցողութեամբ, մարդկային բարձր առաւելութիւններով է օժտւած, իր անճը փրկելու համար, խաբում է «Սոհրաբ»-ին<sup>2</sup>: Կամ պարսից երկու ակնառու գորավարներ՝ «Թուսն ու Գիւ»-ը «Մուղաբ»-ի հանդէպ, որը մի գեղեցկուհի էր: Անտառում մուրում աղջկան տիրանալու նպատակով զայթակղում են եւ թուլութիւն ցուցաբերում: Մրցակցելով մէկը միւսի հետ, սուր բանավէճի են բռնում ու վերջապէս մի երրորդ անճնաւորութեան առաջարկով ու միջամտութեամբ, որոշում են «Մուղաբ»-ին ներկայացնել պարսից թագաւորին<sup>3</sup>:

Ճար. 1

<sup>1</sup> Սասցինը «իբրքէ», որովհետեւ, իրականում յանկարծակի չի, երեխան սպասում է դրան:

<sup>2</sup> «Ռոստոմ եւ Սոհրաբ» պատմավէպը «Շահնամ»-ում:  
<sup>3</sup> «Միաւոշ պատմածքը «Շահնամ»-ում:

## Բարոյական վարձատրութիւններով ընտանիք չես կարող պահել

### «Աստույ Տասներկու օրը»

#### բեմադրութեան առիթով

Վաչիկ Վարդանեան

Բարոյականութիւնը յաղթեց ուժին:

Եւ յաղթեց նաեւ դիւանագիտութեանը:

Ահա հայ ժողովրդի ուրոյն կերպարը՝ նախընտրել բարոյականութիւնը, հարցերի լուծման համար դիմել ներքին զգացմունքներին:

Հայ ժողովուրդն իր պատմութեան ընթացքում երբեք չի նախընտրել դիւանագիտական ուղին: Թերեւս հէնց դա էլ պատճառ է դարձել՝ մխրճել պատերազմի մէջ: Մեր ժողովուրդը բազում անգամ վտանգի է են-



թարկել իր Ֆիզիկական գոյութիւնը, սակայն չի զիջել՝ բարոյականութիւնը, հաւատքը եւ սրբութիւնները: Բոլոր փաստերը եւ մեզ հասած գրութիւնները հաստատում են վերոնշեալ գաղափարը:


Պերճ Զէյթունցեանի «Աստույ տասներկու օրը» թատերգութիւնը դրա ցայտուն օրինակն է:

Վերջերս վերոյիշեալ թատերգութիւնը բեմադրեց Թեհրանի Հ. Մ. Ա. Կ.-ի «Կոմիտաս» սրահում, որի բեմադրիչն էր իրանահայ հանրաժանօթ արեստագէտ Կիտուշ Արզուեանը:

Նախ պէտք է բարձր գնահատել յարգելի բեմադրիչին, որը յանձն էր առել մի շատ պատասխանատու գործ:

Մի այդպիսի բեմադրութեան պատասխանատուութիւն ստանձնելը՝ զրկւած լինելով համապատասխան հնարարութիւններից եւ ուժերից, իրօք պէտք է քաջութիւն համարել:

Գնահատական տալու համար, ըստ իս՝ պէտք է նրկատի առնել բոլոր հանգամանքները: Այն ժամանակ է կարելի անաչառ եւ նոյնիսկ անխնայ վերլուծութիւն կատարել, որ առկայ լինեն այսօրայ թատրոնի համապատասխան հնարարութիւնները: Մեր համայնքում




չկայ արհեստավարժ թատրոն, այդ հարցով չկայ Ֆիւնանսատրում:

Պէտք է թատրոնը նաեւ արհեստ համարի եւ դերակատարը պէտք է վարձատրի միւթապէս: Բարոյական վարձատրութիւններով ընտանիք չես կարող պահել: Եկէք մի հիմնական ելք գտնենք եւ այսպիսով զօրավիզ կանգնենք Արզուեաններին:

Այո բեմադրութիւնն ունէր թերութիւններ: Դերակատարները իրենց դերերը անգիր չգիտէին, հետեւաբար դա վնասում էր սահուն ընթանալուն, որոնց ամենացայտուն օրինակն էր Հայոց Արքայի դերակատարը՝ Արա Աւլանեան: Դերակատարների յարաբերութիւնները մշակւած չէր: Նրանք կարծես խորթ էին բեմայարդարութեան հետ: Հարճն առհասարակ հարճ չէր, նոյնպէս ծաղրածուն՝ պալատի ծաղրածու:

Բեմադրութեան դրական կողմերից կարելի է համարել Քրմապետի դերակատարի՝ Նժդէհ Յովհաննիսեան գերազանց եւ սահուն խաղարկութիւնը: Նա իր վարպետ խաղարկութեան կողքին, օժտւած էր լաւ



ճայնով եւ լաւապէս տիրապետում էր լեզվին:

Այս բեմադրութիւնը կարելի էր աւելի խորը վերլուծել, սակայն ինչպէս վերը նշեց՝ նկատի ունենալով բոլոր հանգամանքները, պէտք է սրտանց շնորհատրել թատերախմբի բոլոր անդամներին, յանձնիս տիկ. Կիտուշ Արզուեանին: ■

«Մայրենի լեզու»  
Դասական Ուղղագրութեան  
Կանոններ

ՌաՖայել Իշխանեան

Բառավերջում յ

Դասական ուղղագրութեամբ բառավերջում ա-ից եւ ռ-ից յետոյ դրուում է չարտասանող յ, օրինակ՝ ծառայ, ենթակայ, երեխայ, եռամեայ, տեսայ, եռօրեայ, արքայ, երկաթեայ, քահանայ, ապագայ, մեքենայ, առարկայ, շուկայ, լուծայ, պողոտայ, խարերայ, սպայ, օտարերկրեայ, ակամայ, կաթսայ, կայ, կապուտաչեայ, չկայ, հեռակայ, առկայ, մեղայ, վկայ, մերձակայ, վրայ, ներկայ, սեւաչեայ, փիլիսոփայ, անխնայ, փեսայ, զուլպայ, պարագայ, տեսայ, երեկոյ, կերայ, հաւաքածոյ, եկայ, ձուլածոյ, անհաճոյ, բարձրահաճոյ, բարեբարոյ, մեծարգոյ, խստաբարոյ եւ այլն:

Կան մի քանի բառեր, որոնք վերջում ա կան ռ ունեն, բայց յ չեն առնում, ինչպէս՝ սա, դա, նա, սրա, դրա, նրա, հիմա, ապա, ահա, հա, այո, քո:

Բայերի հրամայականի ձեւերը, որոնք վերջանում են ա-ով, նոյնպէս յ չեն առնում: Օրինակ՝ կարդա՛, խաղա՛, ասա՛, համարեա՛ եւ այլն: Բայց ապամիջի եւ կատարեալի ձեւերը յ առնում են, ինչպէս՝ խաղայ, կը խաղայ, պիտի խաղայ, կը կարդայ, թող զարմանայ, թող ստանայ, կը ստանայ, պիտի կարդայ, կերայ, ստացայ, հասայ եւ այլն:

Յ գրուում է նաեւ արգելականի վերջում՝ մի՛ կարդայ, մի՛ խաղայ, եւ այլն:

Նոր փոխառեալ օտար բառերի եւ անունների վերջում յ չի դրուում, ինչպէս՝ աղա, փաշա, ամիրա, Ամերիկա, Իսպանիա, Ֆրանսիա, Վոլգա, Գերմանիա, եւ այլն: Բայց հայ մատենագրութեամբ աւանդած անունների վերջում ա-ից յետոյ յ գրուում է, օրինակ՝ Հրատեայ: Յ գրուում է նաեւ գրաբարի՝ սեռականի հոլովով արտայայտուած տղամունկներում ա-ից յետոյ, ինչպէս՝ Վանայ Ժաժիկ, Վանայ լիճ, Մեւանայ լիճ, Մեւանայ թերակղզի, Փարսանայ լիճ եւ այլն:

Միայն մի քանի բառեր կան, որոնցում վերջում ա-ից եւ ռ-ից յետոյ դրուող յ-ն կարդացուում է՝ հայ, բայ, վայ, Նոյ, խոյ եւ այլն:

Բառամիջում օ

Դասական ուղղագրութեամբ բառակերպում օ լուելիս օ է գրուում, ինչպէս՝ օգուտ, օգնել, օր, օր, օր, օրատըր, օճ, օրէնք, օրհաս, օրհնութիւն, օրհնակ, օտար, եւ այլն: Բացառութիւն է վ-ից առաջ գրուող ռ տառը, որ օ է կարդացուում՝ ով, ովկիանոս, Ովսաննայ:

Բառավերջում օ լուելիս գրուում է ոյ, ինչպէս՝ յետոյ, երեկոյ եւ այլն: Ինչպէս զիտենք մի քանի բառերի վերջին ռ-ն առանց յ է գրուում (քո, այո):

Ոմանք օ հնչիւնով վերջացող յատուկ անունները օ-ով են գրում՝ Դրօ, Միամանթօ, Մարօ, Պեպօ, եւ այլն: Բայց ա-մէն դէպքում դասականին աւելի մօտ է բառավերջի յ-ը:

Բառամիջում օ լուելիս մեծագոյն մասամբ գրուում է ռ՝ կով, սով, գործ, մուրր, բոլոր եւ այլն:

Բառամիջում օ գրուում է գլխատրայէտ երկու դէպքում.

1) Երբ ածանցաւոր կամ բարդ բառերի մէջ երկրորդ բաղադրիչը օ-ով է սկսուում, ինչպէս՝ անօրէն, սպօրհնի, տարօրհնակ, բնօրհնակ եւ այլն: 2) Մի շարք բառերի մէջ էլ օ է գրուում գրաբարեան նախկին աւ-ի փոխարէն: Ինչպէս, օրհնակ, հնում գրել է առաւաւտ, յետոյ՝ առաւօտ, կարաւոտ՝ կարօտ- եւ այլն: Սա բաղաձայններից առաջ է, իսկ ձայնատրներից առաջ եւ բառավերջում հին աւ-ը մնացել է (հնչում է՝ ալ) աւաղ, նաւ, կաւ, եւ այլն:

Առհասարակ բառամիջի օ-ն պէտք է ուղղակի յիշել: Կազմում է միջում օ ունեցող բառերի ցուցակ եւ դարձեալ՝ պէտք է յիշողութեան մէջ ամրակայել այդ բառերը: Բերում են այդ բառերի ցուցակը:

ակօս, աղօթք, աղօտ, աղօրիք, անօթ, անօթ, անօթի, սպարօշ, առաւօտ, արտօնեալ, արտօսըր, արօտ, արօր, բռնաղբօսիկ, բօթ, գօշ, գօս, գօտի, դրօշ, դօրօշ, եօթն (ը), գրօսնել, գգօն, գօր, գօշաքաղ՝ «փողասէր», գօր (ը), գօրավիզ, գօրեղ, բափօր, բօթափել, բօն՝ «անձրեւ», բօթել, բօշնել, յօթի, յօլիկ, յօսլ, յօս(ը), յօսել, ծանօթ, ծղօտ, ծնօտ, կարօտ, կարօն, կրօն, կօշիկ, համառօտ, հետազօտել, հօտ «ոչխարի հօտ», ձօն, դօղանց, ճօճ, մօտ, մօր «ճահճուտ», մօրուք, յօր, յօժար, յօնք, յօշոտել, յօրանց, յօրինել, նարօտ, պաշտօն, պօշ, սօլ, սօսի, սօսափ, վառօղ, տօթ, տօն, ցօր, ցօղում, քօղ, օրօր:

Կան մի քանի ածանցներ օ-ով գրուող, անհրաժեշտ է յիշել եւ համապատասխան բառերի մէջ պահել օ-ն: Դ-ը-քանք են՝

- առօտ՝ համառօտ, կարճառօտ
- եօթ՝ արդեօթ, ընտանեօթ, կարծեօթ
- օն՝ գեղօն, գործօն, թափօն, թերթօն, ջարդօն
- օնք՝ զարթօնք
- օրէն՝ զգուշօրէն, հաւանօրէն, վեհօրէն
- օր՝ իրօք, օրօք, նախօրօք, վաղօրօք, խելօք, առօք-փառօք եւ այլն:

Բառեր կան, որոնց սեռական- տրական հոլովը օ-ով է գրուում, ինչպէս՝ մայր- մօր, հայր- հօր, եղբայր- եղբօր, այս- տեղից էլ՝ մօրաքոյր, հօրաքոյր, մօրեղբայր, հօրեղբայր, եղբօրորդի եւ այլն:

Ե-ից յետոյ լուելիս օ է գրուում՝ եօթն, արդեօթ եւ այլն: Այսինքն՝ նոր ուղղագրութեան յ-ն դասականով գրուում է եօ:

- Լրացուցիչ կարելի է յիշել նաեւ, որ՝
- 1) ձայնատրից առաջ պարզ բառերի մէջ օ չի գրուում,
- 2) օ-ն գրուում է երկու բաղաձայնների միջեւ,
- 3) օ ունեցող բառերը մեծ մասամբ մէկ կամ երկու վանկանի են:

Բառամիջում օ ունեցող բոլոր բառերն ու ածանցները իրենց այդ օ-ն պահպանում են ցուցակում բերուած բառերից ու ածանցներից կազմուած բոլոր բարդ եւ ածանցաւոր բառերում, ինչպէս եւ այն բառերի մէջ, որոնցում առկայ ցուցակում բերուածների հիմքերը կամ արմատները: Օրինակ՝

ակօս՝ ակօսել, անակօս  
աղօթք՝ աղօթել, աղօթատուն, աղօթագիրք  
աղօտ՝ անաղօտ, աղօտանալ  
անօթ՝ անամօթ, անօթխած  
արտօնեալ՝ արտօնել, արտօնութիւն, արտօնուած

## Մշակոյթ

*բօթ*՝ բօթաբեր, բօթագուշակ  
*գօտի*՝ պարեգօտ, գօտեպնդել, գօտեմարտ  
*դրօշ*՝ դրօշակ, դրօշակակիր, անդրօշակ  
*եօթն*՝ եօթնապատիկ, եօթնօրեակ  
*գրօսնել*՝ գրօսաշրջիկ, գրօսնող, գրօսավայր  
*զօղ*՝ զօղել, զօղած  
*զօր*՝ զօրք, զօրամաս, զօրագունդ, զօրաքանակ, հա-  
մազօր, հզօր, զօրավիգ, լիազօր, ի զօրոյ, զօրութիւն,  
անզօր, զօրահանդէս  
*խօլ*՝ խօլակաւ  
*խօս*՝ խօսք, անխօս, ստախօս, մեծախօս, շատախօս,  
հրապարակախօս, բացխօսութիւն, խօսքակոչի  
*ծանօթ*՝ անծանօթ, ծանօթութիւն, ծանօթագրութիւն,  
ծանօթանալ  
*կարօտ*՝ կարօտել, կարօտակէզ, կարօտավառ, սիրա-  
կարօտ  
*կրօն*՝ կրօնական, անկրօն, կրօնաւոր, կրօնատէր  
*կօշիկ*՝ կօշկակար, կօշկեղէն, անկօշիկ  
*հետագօտել*՝ հետագօտութիւն, գիտահետագօտական,  
հետագօտող  
*հօտ*՝ հօտաղ  
*ձօն*՝ ձօներգ, ձօնել  
*դօղանջ*՝ դօղանջել, անդօղանջ  
*մօտ*՝ մօտիկ, մօտից, մօտենալ, մօտակայ, մօտաւոր  
*մօր*՝ Մեծամօր,  
*մօրու*՝ *մօրուք* (մաւե մօրուս)՝ մօրուքաւոր, անմօրուք  
*նօսր*՝ նօսրանալ, նօսրացող  
*շօշափել*՝ շօշափուկ, շօշափելի  
*պաշտօն*՝ անպաշտօն, պաշտօնավարել, պաշտօն-  
աւայ, պաշտօնանկ  
*պռօշ*՝ Պռօշեան, պռօշտի  
*սօսափ*՝ սօսափիւն, սօսափել  
*տօթ*՝ տօթակէզ  
*ցօղ*՝ ցօղել, ցօղաշաղախ, Յօղիկ  
*քօղ*՝ քօղարկել, քօղարկութիւն  
*օրօր*՝ օրօրել, անօրօր եւ այլն: ■

### Շար 6 եւ վերջ

## Շեռաբրքի հայկականը

### Հին Հայկական օրանունները

Անուններ են ունեցել հայկական ամսայ բոլոր 30 օրերը եւ Աւելեաց ամսայ 5 օրը: Սհա դրանք:

- |           |             |              |
|-----------|-------------|--------------|
| 1.Արեգ    | 11.Երեզկան  | 21.Գրգուտ    |
| 2.Հրանդ   | 12.Անի      | 22.Կորդուիք  |
| 3.Արամ    | 13.Պարխար   | 23.Ծմակ      |
| 4.Մարգար  | 14.Վանատուր | 24.Լուսնակ   |
| 5.Աիրանք  | 15.Արամագդ  | 25.Յրոն      |
| 6.Մագդել  | 16.Մանի     | 26.Նպատ      |
| 7.Աստղիկ  | 17.Ասակ     | 27.Վահագն    |
| 8.Միիր    | 18.Մասիս    | 28.Սիւն      |
| 9.Չոպարեր | 19.Անահիտ   | 29.Վարագ     |
| 10.Մուրց  | 20.Արագած   | 30.Գիշերաւոր |

### Աւելեաց ամսայ օրանունները

- 1.Փայլածու
- 2.Արուսեակ
- 3.Հրատ
- 4.Լուսնթագ
- 5.Երեւակ

Այս օրանունները ոչ միայն արտացոլում են Հայկական լեռնաշխարհի նշանաւոր տեղանունները, այլեւ հայոց իրավի դիցարան են:

### Հայկական ժամանունները

Հայերը ունեցել են ոչ միայն իրենց ազգային ամսա-նուններն ու օրանունները, այլեւ օրը (գիշերն ու ցերեկը) բաժանել են 24 հաւասար մասերի (ժամերի) եւ դրանց տուել հետեւեալ անունները.

### Յերեկայ ժամանուններ

Այգ	Շանթակող
Ծայգ	Հրակաթ
Չայրացեալ	Հուրփայլեալ
Ճառագայթեալ	Թաղամթեալ
Շառախղեալ	Արագոտ
Երկրատես	Արփող

### Գիշերայ ժամանունները

Խաւարակ	Հաւաթափեալ
Աղջամուղջ	Գեղակ
Մթացեալ	Լուսաճեմ
Շաղաւտ	Առաւօտ
Կամաւտ	Լուսափայլ
Բաւական	Փայլածու

Այս անունների մէջ ի յայտ է գալիս հին հայերի գեղագիտական ճաշակը՝ ցերեկայ ու գիշերայ առանձին պահերի երանգները զանազանելու հարցում: Դրա-նցից մի քանիսը ժամանակակից հայերէնում պահպանւել են արդէն ոչ թէ որպէս ժամանուն, այլ ցերեկայ ու գիշերայ որեւէ պահը ցուցանող հասկացութիւն (օրինակ, այգ, աղջամուղջ, առաւօտ):

### Հայկական Խրատանի

Դժբախտաբար մեր ազգին մէջ շատերու բարձրա-  
նալում զարդանիքը բնական օրէնքով միայն կը լուծուի.  
Ժանրերը միշտ գետնաքարշ կը մնան ու թեթեւները վեր  
կելլեն:

*Յակոբ Պարոնեան*

Ազգային դպրոցները «ազգային ոգու» յենարաննե-  
րից ամենամուծեղն են:

*Աւելեանդր Միսանիկեան*

## Նոր Ջողայի Սբ. Ամենափրկիչ Վանքի Տաճարի Սբ. Գրիգոր Լուսաւորչի չարչարանքների որմնանկարները

(Քրիստոնէութիւնը Հայաստանում ընդունելու 1700-ամեակի առթիւ)

**Լ.Գ. Մինասեան**

Ինչպէս յայտնի է՝ Նոր Ջողան հիմնել է 17-րդ դարի սկիզբներում՝ 1606 թականին, Շահ Աբբասեան մեծ գաղթի ժամանակ, երբ այդ օրերում կառուցել է նաեւ Սբ. Ամենափրկիչ վանքը, ժամանակատր մի փոքր ու անշուք եկեղեցիով, որը 1655 թ. փլեցել է նրա տեղում կառուցել է ներկայի փառաշուք տաճարը եւ աւար-ուել 1664 թականին:

Վանքի եկեղեցին ամբողջութեամբ նկարազարդուած ու ծաղկազարդուած է, որի ամբողջ ծախսերը հոգացել է Խոջա Աւետիք Ստեփանոս Մարտիրոսեանը:

Նկարները առնել են Հին եւ Նոր Կտակարաններից, որոնք սկսում են Ադամ եւ Եւայի ստեղծագործութիւնից, զմբէթի վրայ շուրջէշուրջ, ապա եկեղեցու վերի մասը Հին կտակարանից են, միջի մասինը Աւետարանից՝ Աստուածածնի աւետումից եւ Յիսուսի ծնունդով:

Դասի ցածի մասի հարաւային կողմինը պատկանում են գործք առաքելոցին, իսկ հիւսիս-սային կողմինը՝ Սբ. Աստուածածնի թաղումն է:

Ժողովրդեան մասի ցածի նը-կարները, Սբ. Գրիգոր Լուսաւորչի չարչարանքներն են եւ վեր-ջում Տրդատ թագաւորի եւ Աշխէն թագուհու մկրտու-թիւնը:

Այս որմնանկարները թույլ 19 հատ են, որ սկսում է Սբ. Գրիգոր Լուսաւորչի ձեռքերը փայտին կապելու տեսարանից եւ վերջանում Տրդատ թագաւորի եւ Աշխէն թագուհու մկրտութեան տեսարանով, կատար-ւած Սբ. Գրիգոր Լուսաւորչի ձեռքով:

Արքայի բժշկութիւնից առաջ եղած մի նկարը, ցոյց է տալիս մի կոյսի չարչարանքի տեսարանը:

Սոյն նկարների նմանութեամբ թույլ քսան հատ քիչ-չէներ կան նաեւ Վանքի տպարանում, որոնք բերել են 1646 թականին Յովհաննէս վրդ. Քրքշենցի միջոցով, երբ ինքը տպագրութեան գործին աւելի ծանօթանալու



համար Երոպա էր գնացել: Քիչէները պատրաստուել են 1642 թականին:

Տպատախտակները (քիչէները) սկսում են Սբ. Գրիգոր Լուսաւորչի նկարով եւ վերջանում գահին բազմելու տեսարանով:

Վանքի տաճարի որմնանկարները թույլ 19 հատ են, իսկ տպարանում եղածները թույլ 20 հատ, որոնցից թիւ 3, 11, 17, 18 եւ 19-ը կորել են, չկան, իսկ եղածների միջից միայն մի երկուսն են, որ տարբեր են որմնանկարներից, իսկ միւսները նոյն նկարներն են, որոնց հերթականութեան մէջ եւս շատ քիչ տարբերութիւն կայ:

Վանքի որմնանկարների մէջ կայ նաեւ երկու այլ նկար, որոնցից մէկը ցոյց է տալիս Սբ. Գրիգոր Լուսաւորչի եւ Կեսարիայի մետրոպոլիտի՝ Դեմոնիոսի ող-ջագուրումը, իսկ միւսը՝ Գրիգոր Լուսաւորչի պատա-րագելն ու հաղորդութիւն տալու տեսարանը:

Ինչպէս պարզում է՝ Վանքի տաճարի որմնանկարները նկարել են Վանքի տպարանի քիչէների վրայից եւ գրեթէ նոյն հերթակա-նութեամբ:

Տաճարի նկարները վերագրում են Մինաս Ջողայեցուն, Տէր Ստեփանոսին, եւ Յովհաննէս Վրդ. Մրքոզին (Տիեզերա-լոյսին), յատկապէս Գրիգոր Լուսաւորչի չարչարանքների որմնանկարները: Այս նկարները ըստ աւանդութեան, նկարել են 18-րդ դարի սկիզբներում, երբ

տեղադրել են նաեւ տաճարի որմների ցածի յախճապակիները:

Տաճարի յախճապակիները տեղադրել են երկու անգամ, ժողովրդեան մասինն ու դասինը՝ 1710 թականին, իսկ բենինը՝ 1716 թականին: Ժողովրդեան մասի յախճապակիների տեղա-դրումի ժամանակ, փակել է նաեւ այդ մասի՝ հարաւային կողմի դուռը: Թում է մի դուռ ունեցել է նաեւ դասի հիւսիսային կողմում, որն եւս փակել է նոյն ժամանակում:

Վանքի տաճարի մասին աւելի հանգամանօքէն գրել է «Ժրանի Հայկական Վանքերը» գրքում, ուր բերել է նաեւ վերոյիշեալ յախճապակիների մասին եղած արձանագրութիւնները \*:

Ստորեւ բերում ենք, թէ՛ Վանքի տաճարի եւ թէ՛ տպարանում եղած տպատախտակների ցանկերը, իրենց բացատրութիւններով:

\* «Ժրանի Հայկական Վանքերը» Լ. Գ. Մինասեան, Թեհրան, 1971թ., էջ 39-71:

# Մշակոյթ

## Ցանկ տպարանում եղած քլիշէների

- Ա. Գրիգոր Լուսաւորչի դիմանկարը
- Բ. Չեռքերը փայտին կապելը
- Գ. .... (կորած)
- Դ. Ուտքերը կոճղի մէջ դնելը
- Ե. Չեռքերը կապած տանելը
- Չ. Ծեծելը
- Է. Գլուխը ճզմիչի տակ դնելը
- Ը. Գլուխը պարկի մէջ դնելը
- Թ. Որովայնը իւր լցնելը
- Ժ. Գամների վրայ քարշ տալը
- ԺԱ. ....(կորած)
- ԺԲ. Ծառից կախելը
- ԺԳ. Գլխին իւր լցնելը
- ԺԴ. Վիրապ գցելը
- ԺԵ. Տրդատ թագաւորին բժշկելը
- ԺԶ. Տրդատի ու թագուհու մկրտելը
- ԺԷ-ԺԹ ..... (կորած)
- Ի. Գրիգոր Լուսաւորչի Գահին բազմելը

## Ցանկ Վանքի տաճարի որմնանկարների

1. Չեռքերը փայտին կապելը, Տրդատ թագաւորի ներկայութեամբ
2. Գլխիվայր կախելն ու ծեծելը
3. Ուտքերը կոճղի տակ դնելը
4. Չեռքակալած տանելը
5. Ծեծելը
6. Գլուխը ճզմիչի տակ դնելը
7. Գլուխը պարկի մէջ դնելը
8. Որովայնը իւր լցնելը
9. Գամների վրայ քարշ տալը
10. Կողքերը մանգաղով վիրաւորելը
11. Չեռքերը ծառին կապելը
12. Գլխին իւր լցնելը
13. Խոր վիրապ գցելը
14. Կոյսին չարչարելն ու աչքերը փոխելը
15. Տրդատ թագաւորին բժշկելը
16. Գր. Լուսաւորչի եւ Տրդատ թագաւորի եկեղեցու դռան առաջ աղօթելը
17. Տրդատ թագաւորին եւ Աշխէն տիկնոջ մկրտելը
18. Գրիգոր Լուսաւորչի եւ Կեսարիոյ մետրոպոլիտի հետ գրկախառնելը
19. Պատարագ մատուցելն ու հաղորդելը

Գրիգոր Լուսաւորչի չարչարանքները պատկերած է նաեւ Նոր Ջուղայի Սբ. Բեթղեհեմ եկեղեցու որմնանկարներում, որոնք շատ չնչին տարբերութեամբ, գըրեթէ նոյնաձեւի նկարներ են, ինչպսս որ նկարած է նաեւ Սբ. Ամենափրկիչ վանքում: ■

Նոր Ջողա  
8 դեկտ. 2000 թ.

### Նովրուզ

### Շաբ էջ 1-ից

Որոշ կանայք վերցնում են երկաթեայ թասեր եւ, կանգնելով հարեանների կամ մտերիմների տների առաջ, գոլով հարածում են թասերին: Տանտէրը պարտաւոր է դուրս գալ եւ նրանց հիւրասիրել քաղցրաւենիքով՝ հաւատարմով, որ գոլների ձայնից «չարը» չի մտնում տանը: Արարողութիւնն անւանում են *դաշողզանի* (բացառի՝ «գոլախփիթիւն»):

Հիւանդ ունեցող տներում այդ օրը հարեաններից վերցրած մթերքներով եւ տան առաջ թասերին հարածող կանանց գոլներով յատուկ, այսպէս կոչւած «հիւանդի ճաշ» են պատրաստում եւ բաժանում աղքատներին՝ հաւատարմով, որ հիւանդը կառողջանայ եւ հիւանդութիւնը զալիք տարում չի շարունակի:

Առանց բացառութեան բոլոր տներում քաղցրաւենիք եւ աղանդներ են պատրաստում եւ հիւրասիրում մէկը միւսին:

Նովրուզի օրը սկսում է ամանօրեայ սեղանով: Սեղանի վրայ դնում են ծաղիկներ, մոմեր, հայելի, Դուրան եւ, այսպէս կոչւած, *հաճք սինը*՝ պարսկերէնում «ա» տառով սկսող եօթ մթերքներ՝ սխտոր, խնձոր, քացախ, կանաչեղէն, սմախ եւ այլն: Շիրագում ընդունւած են պարսկերէնում «մ»ով եօթ մթերքներ՝ մածուն, միրգ, մուշ, ձուկ եւ այլն: Բացի այդ, հիւրերին հիւրասիրում են մեղրով, արմաւով, կարագով եւ պանրով, ինչպէս նաեւ փլաւի զանազան տեսակներով: Սեղանին ընտրանիքի թուղ դրում են ներկած ձեր, եւ մոմեր են վառում, որոնք չեն հանգցնում մինչեւ նրանց սպառելը: Ծխում են նաեւ խունկ եւ *սեփանը* (անուշահոտ բոյս): Սփռոցին դնում են մի ոսկեայ կամ արծաթեայ մետաղադրամ (կամ որոշ քանակութեամբ փող), ինչպէս նաեւ ամանի մէջ որոշ չափով ծիլ արձակած գորեն, որպէսզի զալիք տարին առատ եւ հացաշատ լինի:

Ընտանիքի բոլոր անդամները, նոր հագուստներ հագած, հաւաքում են սեղանի շուրջ՝ դիմաւորելու Նովրուզը: Երբ յայտարարում է նրա գալուտը, երեխաները մօտենում են հանքուրում են ընտանիքի նահապետի ձեռքը եւ նրանից ուերներ ստանում: Այնուհետեւ տան աւազը մի աղօթք է կարդում Դուրանից: Տանը փոքր ինչ մնալուց յետոյ մարդիկ շտապում են շնորհաւորելու իրենց բարեկամների եւ մտերիմների տօնը: Ընդ որում, բարեկամին կամ ընկերջոն առաջինը այցելելը յարգանքի նշան է համարում: Այցելութիւնները եւ տօնակատարութիւնները շարունակւում են մինչեւ Նոր տարւայ 13-րդ օրը: Սակայն հիմնական եռուգեղ սովորաբար տեսում է հինգ օրից ոչ ատել:

Հետաքրքիր է նաեւ Նոր տարւայ առաջին շաբաթ օրը: Եթէ Նովրուզը համընկնում է շաբաթ օրւայ հետ, ապա դա յաջողութեան նշան է համարում: Մարդիկ ձգտում են Նոր տարւայ առաջին շաբաթ օրը ուրախութեան մէջ անցկացնել, որպէսզի այն երջանիկ տարի լինի: Նոր տարւայ 13-րդ օրը իրանցիները տանը մնալը համարում են վատ նշան եւ ձգտում են այն անցկացնել բնութեան գրկում, որտեղ սեղաններ են գցում եւ անցկացնում ուրախ տօնախմբութիւններ: Այդ արարողութիւնը կոչւում է *սիզդարեղար* («տաներէքի վանում»): Այսպանով աւարտում է Նովրուզի տօնակատարութիւնը: ■



## Առողջապահական

◦ ñ̄ ñ̄ ã³ ÷ ã³ ½³ Ýó³ Û³ ãĭ ãĭ » ð ù³ ß ð á Ğ ÷ ù  
 ✖ ñĭ Ç ð ð³ Í á ð Ğ Ç ð Ý ã  
 á ð Ý ÷ ù ð ñĭ Ç ð ð³ ã³ ã³ ã³ Ë á ð Û, Ó » é ù » ñ Ç  
 ¹ á Ğ á ó » ð ®  
 Ñ » ï » ð » ð³ Ē Ĭ ï » ñ Á Ó » ½ Ĭ ù. Ý » Ý ...

*Թարգմանեց  
 Վիոլետ Ջուակիսը (Քեշիշեան)*

Հրաշք էր թու՛մ՝ 32 տարեկան Մարգրիտը ճաշում էր մի ճաշարանում: Նրա վերցրած փոքր պատառների եւ չափազանց ուշադիր ուտելու երեսոյքը ուշագրաւ չէր, բայց Մարգրիտին դա արտակարգ էր թում:

Դպրոցական շրջանում, նա խուսափում էր դպրոցի ճաշարանում՝ ճաշելուց: Նրան թում էր, որ իր դասընկերները ընդմիջու հետետում են իրեն, եւ ամենուրեք նրանց հայեացքների ծանրութիւնն զգում էր: Վերջապէս նա անդրադարձաւ, որ իսկապէս մի յուրջ հոգեկան դժարութիւն ունի: Համոզուած էր, որ եթէ լուծի իր դժարութիւնը, ապա մի այլ անձնատրութիւն կը դառնայ եւ աւելի շատ յաջողութիւնների կը հասնի:

Երկիւղածութիւնը համաշխարհային համընդհանուր պրոբլէմ է:

Հաշտումների համաձայն՝ դժարութիւն-ներ ստեղծելու դէպքում իրաքանչիւր 8 հո-գուց մէկը տառապել է երկիւղածութիւնից: Երկիւղածութիւնների նշաններից կարելի է համարել՝ սրտի արագ բարբախում, ցրածութիւն, լորձանքի ցամաքում, ափերի քրտնում, բառերի ճիշտ արտասանելու անկարողականութիւն եւ վերջապէս հանրութիւնից խոյս տալու երեւոյթ: Այսպիսի անձնատրութիւնները նոյնիսկ միւսների ներկայութեամբ խուսափում են հեռախօսազրոյցից: Նրանցից ոմանք աշխատավայրում նոյնիսկ չեն խօսում, մանաւանդ երբ ներկայ է նրանց պետը: Մի խօսքով կարելի է ասել, կամայ-ակամայ ցանկապատ են ստեղծում իրենց եւ միւսների միջեւ:

Ըստ հոգեբուժների՝ այս հիւանդութեան բուժում-ները սկսել են 1980 թականից: Վերջիններս համոզ-ւած են, որ ինտերնետը (internet) նպաստել է վերոնշեալ հիւանդութեան տարածելուն եւ խստանալուն:

Գիտնականների ուսումնասիրութեան համաձայն այս հիւանդութեան նշանները սկսում են նշմարել, երբ դեռ մանուկը ընդամենը 16 շաբաթայ ծնած է լինում:

Որոշ երեխաներ, որ չգիտեն դիմադրել կեանքում ամկայ հոգեկան դժարութիւններին՝ խուսափում են հասարակական շփումներից: Նրանք անկարող են դառնում յարաբերութիւն ստեղծելու, նոյնիսկ հրաժարում են դպրոց յաճախելուց:

Երկիւղածութեան խոր ազդեցութիւնը՝ մի աշակերտի վրայ պատճառ էր դարձել, որ նրա դասընկերուհիները մրցում էին միմեանց հետ նրան բարեւելու համար, որպէսզի ականատես լինեն նրա անսովոր կարմրելուն: Նա դասարանում որեւէ մէկի հետ չէր խօսում, նոյնիսկ պատահական մարդու կողքից անց-

նելիս քրտնում էր, սակայն 19 տարեկանում հոգեբուժների օգնութիւնների շնորհիւ բուժում է, իսկ 24 տարեկանում նա ամբիոնի մօտ բանախօսում է 1700 հոգու ներկայութեամբ:

Հոգեբուժների կարծիքով, նման անձնատրութիւն-ների երկիւղածութեան պատճառը, այն է՝ նրանք մտավայրութիւն ունեն, որ ուրիշները նրանց սխալ կը հասկանան, հետեւաբար կարհամարհեն:

Մի կին պատմում էր, որ ինքը անգամներ մերժել է հարեանների հրաւերները, միայն այն մտավայրութիւնից ելնելով, որ կարող է նրանք հանդիպումներից յետոյ հիասթափու են եւ զղջան նման հրաւերներ ուղարկելու համար: Իսկ նա սրտի խոքոքում, մեծ ցանկութիւն էր զգում, այդ հանդիպումներին մասնակցելու:

Այսպիսի հիւանդներին տարբեր ձեւերով են բու-ժում: Օրինակ՝ նրանց համոզում են, որ մի նիւթի մա-սին, մի խումբ մարդկանց ներկայութեամբ կարճ բանախօսութիւն ունենան, կամ մի ուրիշին տանում են մի ճաշարան, որտեղ ներկայ են բազմաթիւ այցելուներ:

Հոգեբուժների ընդհանուր կարծիքն այն է՝ անհրաժեշտ է երկիւղածութեամբ տառապող հիւանդների ուշադրութիւնը կենտրոնացնել մի այլ խնդրի վրայ, որպէսզի նա մոռանայ իրենը: Երբեմն նոյնիսկ նրանք առաջնորդում են մի ինչ-որ հիւանդանոցում աշխատելու: Այսպիսով նրանք մոռանում են իրենց հիւանդութիւնը:

Եւ վերջապէս հոգեբուժների մեծամասնութիւնը, այն կարծիքի են՝ եթէ ամաչկոտ եւ քաշուող անձնատրութիւնները կարողանան իրենց երկիւղածութեանը յաղթել, կարող ենք ունենալ աւելի ցանկալի աշխարհ: Օրինակ է բերում, որ եթէ չլինէր ամաչկոտութիւնը, ապա այսօր, մենք առաւել կօգուտէինք մեծերի՝ Ալբերթ Անշտայն, Ռոբերտ Ֆրոսթ, Էլիանոր Ռուզվելթ եւ ... շնորհքներից:

Այսպիսով կարելի է ասել ամաչկոտութիւնը տոկոսային հաշուով կապում է մէկ անձնատրութեան զգայնութեանը, հասկացողութեանը, ըմբռնմանը եւ խորագնութեանը: Այնպէս ասած, այն յատկութիւնները, որոնցով պէտք է պարծենալ եւ ոչ թէ քաշուել եւ ամաչել: ■



## Տխրու՛նի

«Լոյս» երկշաբաթաթերթը իր վշտակցութիւնն է յայտնում ներդրոյիշեալ նորոգ հանգուցեալների անմիջական հարազատներին և բոլոր սգակիր-ների:

- < Սիմա Ալէքսանեան
- < Աննիկ Մարտիրոսեան
- < Սիրվարդ Յովհաննիսեան (Բալայեան)
- < Դենրիկ Միրզայեան
- < Արտաշէս Տէր Պետրոսեան
- < Դոնիսիկ Բաղդամեան
- < Նորայր Սահարեան
- < Դայկ Օհանեան
- < Աշոտ Մուսախանեան
- < Դրանուշ Ազարեան (Դանիէլեան)
- < Դանրի Աբրահամեան

# Սարգսկան


## ՖՈՒՏԲՈՒԼԻ ԸՆԴՐԱԳԻՏԱՐԱՆ

**ՊԱՆԻԱ.** Ֆուտբոլային միութիւնն ստեղծել է 1889թ.: ՖԻՖԱ-ի անդամ է 1904-ից: Խոշորագոյն մարզադաշտը՝ «Ինդրետասպարկ» (Կոպենհագէն)՝ 48.000: Երկրում կայ 210.000 Ֆուտբոլիստ: Դանիայի հուարականը (մարզագգետը կարմիր մարզաշապիկ, սպիտակ վարտիք, կարմիր-սպիտակ զանգապան) 1992թ. Եւրոպայի չեմպիոն է, 1908, 1912 եւ 1960թթ. օլիմպիական խաղերի 2-րդ մրցամակալի: Դանիական Ֆուտբոլին բնորոշ են տեխնիկական լաւ պատրաստակամութիւնը, յարձակողական արագ եւ սուր գործողութիւնները:



Առաջատար ակումբներն են «Կոպենհագէնը», «Օդենսէն», «Բրոնդբիոն», «Վայլեն»: Լաւագոյն խաղացողները՝ Ջ. Հանսէն, Կ. Հանսէն, Մադսէն, Հ. Նիլսէն, Միմոսէն, Էլկեստեր Լարսէն, Լաուդրուպ, Լ. Օլսէն, Հ. Լարսէն, Էնսէն եւ ուրիշներ: Լաւագոյն մարզիչը՝ Միլլեր Նիլսէն:

**ՊԱՐՊԱՍ.** Խաղադաշտի ճակատային գծի վրայ երկու ուղահայեաց եւ մէկ հորիզոնական ձողերով շրջանակաւ, ետեւը ցանցապատ ուղղանկյուն տարածութիւն,



որը հաւասարաչափ հեռաւորութեան վրայ է գտնուում անկիւնային դրօշակներից: Դարպասի երկարութիւնը (ուղահայեաց ձողերի միջեւ)՝ 7մ 32սմ, բարձրութիւնը՝ 2մ 44սմ, ձողի տրամագիծը՝ 12սմ:

Ժամանակակից Ֆուտբոլի ծննդեան առաջին տարիներին դարպասները գուրկ էին հորիզոնական ձողերից, եւ հաշուում էր ուղահայեաց ձողերի միջով ցանկացած բարձրութեամբ խփած գոլը: Շուտով ձողերը վերելից կապեցին պարանով, որը 1875թ. փոխարինեց փայտեւ ձողերով: 1891թ. դարպասները ցանցապատեցին, որը հնարաւորութիւն է տալիս յստակ որոշելու՝ խփել է՞լ է գոլ, թէ՞ զնդակն անցել է դարպասի մօտով:


**ՊԱՐՊԱՍԱՊԱՏ.** Ֆուտբոլիստ, որն անմիջականօրէն պաշտպանում է դարպասը: Սկզբնական շրջանում նա իրաւունք չուներ ձեռքերով պաշտպանելու, այլ խօսքերով ոչ մի առաւելութիւն դաշտի խաղացողների համեմատ: 1871թ. նրան թոյլատրեցին խաղալ ձեռքերով, բայց՝ միայն դարպասային հրապարակի սահմաններում: Աւելի ուշ (1902թ.) ձեռքերով խաղի շրջանակն ընդլայնեց՝ ամբողջ տուգանային հրապարակի տարածքում:

Դարպասապահը պէտք է ունենայ ամուր նեարդեր, կողմնորոշման արագութիւն, լաւ ցատկունակութիւն եւ դիմացկանութիւն, բարձրից եկող գնդակների համար պայքարի ելնելիս՝ ժամանակին թողնի դարպասը, նաեւ ճիշտ կազմակերպի եւ ղեկավարի պաշտպանութիւնը: Պէտք է չափատր լինեն նրա Ֆիզիքական տուեալները:

Շատ բարձրահասակ դարպասապահները լաւ են որսում բարձրից եկող գնդակները, սակայն հակառակ դէպքում դժարանում են: Ցածրահասակ դարպասապահներն, ընդհակառակը, արագաշարժ են ու ճկուն, բայց քիչ յուսալի են բարձրից եկող գնդակների առաջն առնելիս: Չափից աւելի ծանրաքաշները դանդաղուտ են, իսկ թեթեւաքաշները չեն կարող մրցակիցների դէմ յաջողութեամբ պայքարել գնդակի համար: Դարպասապահի վրայ յարձակումն արգելւած է, եթէ նա արդէն տիրել է գնդակին: Տուգանային հրապարակում նա իրաւունք չունի ձեռքերով բռնելու իր խաղընկերոջ ուղարկած գնդակը (կարելի է զլխով փոխանցման դէպքում): 11մ հարածի ժամանակ դարպասապահը պէտք է կանգնած լինի դարպասի գծի վրայ, անկիւնային եւ տուգանային հարածների ժամանակ ընտրի ամենապարմարւէտ դիրքը:

Դարպասապահը թիմի վերջին նեցուկն է: Շատ դէպքերում նրա յաջող խաղն է վճռում մրցութեան ելքը, յատկապէս 11մ հարածաշարի ժամանակ: Համաշխարհային Ֆուտբոլի լաւագոյն դարպասապահներից են Ջամորան, Պլանիչկան, Եաշինը, Բենքար եւ ուրիշներ: Հայկական Ֆուտբոլում՝ Մ. Ջատիկեանը, Ռ. Մաթեոսեանը, Ա. Արախանեանը:

**ՊԱՐՊԱՍԻ ԳՐԱՌՈՒՄ.** Խաղի վերջնական նպատակը դարպասի գրաւումն է: Դա արձանագրում է այն դէպքում, երբ գնդակը ուղղահայեաց դարպասաձողերի միջով ամբողջութեամբ անցնում է դարպասային գիծը: Եթէ գնդակն իր ինչ-որ մասով գտնուում է դարպասի գծի վրայ, ապա դարպասը չի հաշուում գրաւած: Նոյնը, եթէ յարձակող թիմի խաղացողը թոյլ է տուել կանոնների խախտում, ձեռքով է հարածել գնդակին: Մրցավարները պէտք է յստակապէս ուշադիր լինեն ու ճիշտ կողմնորոշեն այն դէպքերում, երբ գնդակը հարածից յետոյ դիպչում է դարպասի հորիզոնական ձողին եւ համարեա ուղիղ գծով իջնում գետին:



Դարպասի գրաւումը կոչւում է գոլ: Եթէ մրցավարը սուլիչի ազդանշանով արձանագրել է դարպասի գրաւում, բայց նոյն պահին համոզուել, որ սխալուել է, ապա պարտաւոր է չհաշուել գոլը եւ նշանակել ազատ հարած:

**«ԴԻՆԱՍՕ» (Երեւան)**՝ Ակումբը հիմնել է 1925թ., գոյատեւել մինչեւ 1953թ.: Հանդէս է եկել ԽՍՀՄ առաջնութեան մրցումներում, 1937թ. «Բ» խմբում, 1945, 1951-53թթ. «Բ» խմբում, 1946-48թթ.՝ 2-րդ խմբում, Հայաստանի վեցակի չեմպիոն, քառակի գաւաթակիր: 1947-ից թիմի կազմը համալրեց երիտասարդ եւ խտտումնալի խաղացողներով, այդ թում՝ Բէյրութի «Բաղրամեան» ակումբի Հայաստան տեղափոխուած Ֆուտբոլիստներով: «Դինամօ» ցուցադրելով գրագէտ խաղ, 1948-ին տեղափոխեց բարձրագոյն խումբ, ուր հանդէս եկաւ 1949-50թթ.: Աչքի ընկած Ֆուտբոլիստները՝ Բ. Հայկեան, Վ. Բոյկօ, Կ. Մելիք-Օսիպով, Մ. Բուսնիկ, Վ. Բերեժնոյ, Գ. Գրիգորեան, Յ. Մարտիրոսեան, Վ. Բեխտենեւ, Ա. Ստեփանեան, Մ. Շահնազարեան, Հ. Քելեջեան, Զ. Փոլադեան, Մ. Մեմբրեան, Հ. Չալիկեան, Հ. Մխայեան, Ի. Մկրտչեան, Հ. Կարմիրեան, Ս. Ջատիկեան, Հ. Ասատրեան, եւ ուրիշներ:

## Ժամանց

### Խոհարարական հնարամտություններ



- \* Սեխի հասածությունը կարելի է որոշել՝ սեղմելով նրա գագաթին: Խակ սեխի գագաթը պինդ է լինում, իսկ հասածինը՝ մի քիչ փափուկ:
- \* Հասած ձմերուկը ունենում է փայլուն կեղև:
- \* Թարմ պոմիդորները երկար կը պահպանեն, եթե նրանց շարել մեկ շաբաթով՝ պտղակոթերը վերես:
- \* Որպեսզի խնձորը խաշելիս ցալքուն չտայ եւ չկայչի տապակից (թափալ), հարկատը է խնձորը մի քանի տեղից ծակծկել եւ տապակի մեջ լցնել մի քիչ ջուր:
- \* Թարմ խնձորը լաւ է պահում, եթէ նրան լցնում են փայտի չոր եւ մաքուր թեփի մեջ:



### Հումոր

#### Հարսնացուի մօր պարը

Մի հարսանեաց հանդէսի ժամանակ հարսնացուի մօրը հրաւիրում են պարելու:  
 -Վի՛ համօթայէ, իտ հարսեմը մարը պար կիկա՞յ,-  
 ասում է, հարսի մայրը:1  
 Բոլորի ջանքերը ապարդիւն են անցնում:  
 Շատ խորհելուց յետոյ դիմում են հարսի ւսագ եղօրը՝ մի հնարք գտնելու համար: Նա էլ իր հերթին երկար մտածելուց յետոյ, դիմում է մօրը.  
 -Ամար բեղա պար կաս, թա չէ ըստուքեր մեր ախշիզը տանիլ չըն:2  
 Մայրը հետեւանքի մասին մտածելուց յետոյ համաձայնում է.  
 -Դէ լաւ, որ շատեք ասըմ, մի հետ շոտի կը տամ:3  
 Ու սկսում է անվերջ պարել՝ առիթ չտալով միսնեղին:  
 Այս անգամ խնամիները դիմում են «պատմական» գոքանչին՝  
 պարը դադարեցնելու համար: Իսկ հարսի մայրը պատասխանում է.  
 -Պար չըմ կալ, պար չըմ կալ, նի կըմտնըմ տուրս չըմ կալ:4

\*\*\*

- 1.Ամօք է: Միթէ հարսի մայրը կը պարի (հին ժամանակներում հարսի մօր պարելը ամօք էր համարում):
- 2.Մայր, պէտք է պարես, հակառակ դէպքում, սրանք (խնամիները) մեր աղջկան չեն տանի:
3. ... մի անգամ (շուրջ) կը պտտեն:
- 4.Չեն պարի, չեն պարի, թէ որ մտնեն դուրս չեն գայ:

Ոստիկանը դժարութեամբ գետնից բարձրացնում է կռի մեջ տուժած հարբեցողին:  
 -Դուք կարո՞ղ էք բնութագրել ձեզ հարածող անձնատրութեանը, հարցնում է նա:  
 -Ես հենց դրանով էի զբաղւած այդ պահին, երբ նա յարձակւեց ինձ վրայ:

\*\*\*

Բանակում.  
 -Լսէք, խնդրում են արագացրէք եւ որոշէք դուք փո՞ղ էք գցում բանկ, թէ՞ վերցնում:  
 -Դէ իհարկէ վերցնում են, գրողը տանի: Որտեղ են ես խցկել ատրճանակը:

\*\*\*

Դատաւորը.  
 -Եւ այսպէս դատապարտեալը ձեզ անանել է յիմար: Դա ճշմարտութի՞նն է:  
 -Այո՛:  
 -Այդ դէպքում ինչի՞ց էք դուք բողոքում:

\*\*\*

Դատաւորը դատապարտեալին.  
 -Յոյսով են մենք այլեւս չենք հանդիպի:  
 -Իսկ ինչ է, դուք թոշակի է՞ք գնում:

\*\*\*

Գիշերով մութ փողոցում անձանօթը աղերսագին խնդրում է անցորդին:  
 -Եթէ դուք հենց հիմա ինձ երկու հարիւր դոլար տաք, կը փրկէք մի յարգարժան մարդու կեանք:  
 -Եթէ դուք ձեզ նկատի ունէք, չարաչար սխալում էք, դուք նման էք թափառականի:  
 -Ես ձեզ նկատի ունեմ:


\*\*\*

-Գանձապահը փախել է:  
 -Իսկ չիրկիզող պահարանը նայե՞լ էք:  
 -Ի՞նչ էք ասում, նա այնտեղ չի տեղաւորի:

\*\*\*

-Դուք անյարմար չէ՞ք զգում, այդքան յաճախ դատարանում գտնուելու համար:  
 -Ոչ ձերդ մեծութիւն: Ինձ միշտ թացել է, որ սա բաւականին լուրջ հիմնարկութիւն է:

### Յերե՛կ, թէ գիշեր



Շովափի է՛ ալիքները մեղմիկ ծփում են ափի ւսագներին ու ետ քաշում: Նկարիչը զմայլելով ծովի այդ գեղեցկութիւնից, այն նկարում է եւ՛ ցերեկը, եւ՛ գիշերը: Որոշեցէք, ո՞ր նկարը երբ է նկարւած:

**ԼՈՅՍ-** Պատասխանէք հարցին եւ նւեր ստացէք:

Համար 23-ի էջ 17-ում տպագրւած հանելուկի (Ո՞ր ժամին) պատասխանը Ո՞ր ժամին- Բեւեռներում

# Ժամանց

## ԽԱՉԲԱՌ- ՀԱՄԱՐ 16

Կազմեց՝  
Կ. Տ. Յովհաննիսեան

### ՇՈՐԻՉՈՆԱԿԱՆ

1. Հայ մեծանուն վիպասան:
2. Մակերեսի միատուր- ԱՖրիկեան երկիր- երազանք:
3. Առանց որի դեղ դուրս չի գրի- առանց դրա էլ ապրուստ չի լինի:
4. Օժանդակ բայ- գրկել հինգ զգայա- րաններից մեկից- գոյութիւն ունեն:
5. Աջից՝ գազան- առհասարակ գինու աման- այրելու գործողութիւն:
6. Միրելի հարս- առաջ- ձայնանիշ:
7. Գոց- մարմնի անդամների գործողու- քեանը օժանդակող միջոցներից- ժամա- նակահատած:
8. Ներս չէ- համեմ է- կրկեսային խաղ մարդու ու կենդանու միջեւ:
9. Բնական թերութիւններ ուսումնասիրող մասնագէտ- միջնադարեան ազնուակա- նութեան կալածք:
10. Գոյութիւն ունենալ- ժայռ- վերջնածանց է:
11. Աչք- արատաւոր անձ- սուր ականջ ունեցող:
12. Ոյժ, հզօրութիւն, շարժման ընթացք- բուսական իւղ (օտար)- աջից՝ մարմնի զոյգ անդամներից:
13. Այնուհետեւ- անգլոլս՝ սար- շախմատային սպառնալիք:
14. Լատութիւն- անտառային հատապտուղ- պարսիկ մեծ բանաստեղծ, գիտնական:
15. Տեխնոլոգիայի ամենամախնական գիտերից- երոպական երկիր:

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1															
2															
3															
4															
5															
6															
7															
8															
9															
10															
11															
12															
13															
14															
15															

### ՈՒՂԱՇԱՅԵԱՅ

1. Ժամանակակից պարսիկ մեծ գրող- հաստատական բառ:
2. Երկրորդ մարգարէ Յուդայականութեան մեջ- հարցական բառ- հանգրուան:
3. Սարսել, սրսիալ- հրեշտակ:
4. Այլ իմաստով՝ կազմակերպութիւնների ստորին մարմին- շատ ուժեղ, խիստ- օրայ լոյս ժամանակը:
5. Ճլպտորիկ, սիրունիկ- անսփոփ, անմխիթար:
6. Այսպիսի արտադրութիւնը շուկայում գնող չի ունենայ- հոգեւոր աստիճան:
7. Հաղորդակցական միջոց- ալիւր ստանալու գործողութիւնը- յոգնակիի մասնիկներից:
8. Կտոր ընկած- վշտալի:
9. Կրկնած ձայնաւոր- իրենից յետոյ զացող բառի գոյութիւնը բացառող բառ- հայոց գերած հսկան:
10. Ձեռնդել- չափազանց արագ պար- անաւարտ՝ կար:
11. Գրական ստեղծագործութիւն- կարեկցող, վիշտը բաժանող:
12. Չօրավիզ հանդիսացող- պահեստ- ձայնանիշ:
13. Մահմեդական աղօթք- արդարութեանը հասնելու պրոցես- մահմեդական աղանդ:
14. Ջրային բոյս անուշաոտ ծաղիկներով- շրջան ու քաղաք Հայաստանում:
15. Գործողութիւն՝ բնագրային արտասանութեամբ- պայքարող անձ, զինուոր- փոխաբերական իմաստով՝ ստի վրայ հիմնած:

**ԼՈՒԾԵԸ  
ԽԱՉԲԱՌԸ  
  
ՍՏԱՅԵ  
ՆԷՐ**

**Խաչբառ համար 15-ի  
լուծած տարբերակը  
տեսնել՝ էջ 6-ում:**

# ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՄԻ ԽԱՂԱՂ ԳԻՇԵՐ

Պրոֆ. Ռ. Ղազարեան

-Մերժանտ ջան, դարդ մի անի, վերջը լաւ կը լինի,- կէս հայերէն, կէս ռուսերէն, ասաց մեխանիկ-վարորդ Վիկտոր Բոյկօն, անջատելով Ֆորդօն բեռնատարում տեղադրած փոխադրական ռադիօկայանը սնող փոքր շարժիչը: Պատերազմից առաջ Վիկտորը խաղացել է Երեսանի «Դինամօ» Ֆուտբոլային քիմի կազմում. Ռազմիկին հաճոյք պատճառելու նպատակով մէկ-մէկ օգտըւում էր հայերէնի իր շատ համեստ պաշարից: Տեսնելով, որ Ռազմիկի դէմքի թախծոտ արտայայտութիւնը չի փոխաւում, նա աւելացրեց.



-Դէ լաւ, միս աշխարհ չուղարկեցին Բորեային՝ ընդամենը ուրիշ գործնաւ. ուշադիր լսիր որտեղ-որ է «ձէն կը տայ»:-Այս ասելով Վիկտորը պառկեց նստարանին, ուսապարկը յարմարեցնելով գլխի տակ:- Քանի ընդմիջում է՝ մի քիչ աչքս կայցնեմ, կանչ լինի՝ թափով քացի կը տաս:

Մանկութեան ընկեր պէպէտեւ Բորիսի հետ անբա-ժան էին գորակոչման առաջին օրից՝ կապի նոյն վաշ-տում, եւ յանկարծ, մի քանի օր առաջ, նրան ուղարկեցին ուրիշ գործնաւ: Չսպելով արցունքները, հազիւ կարողա-ցան պայմանաւորել՝ ամէն գիշեր ժամը 12-ից մինչեւ 12 անց տաս քուպէ լսել միմեանց No 120 ալիքով: Հաղորդողը Բորիսն է, լսողը՝ Ռազմիկը: Կոչային ազդանշանը՝ անուան-հայրանուան-ազգանուան սկզբնատառերը Մորգէի կողով:

Եւ հէնց յաջորդ օրը գործնաւը ճամփայ ընկաւ ու, առաջ շարժելով 20-30 կիլոմետր, տեղ գրաւեց Ֆաշիստներից ազատուած մի անտառաշատ կիրճում: Գերմանացիք երեւի հապճեպ էին նահանջել՝ այդպիսին էր առաջին տպաւորութիւնը. անգամ չէին հասցրել պայթեցնել մի քանի լաւ ամրացած գետնափոր հիւղակներ, որոնք աւելի շուտ ընդարձակ սեմեակներ էին յիշեցնում, քան հիւղակներ: Դրանցից մէկում տեղաւորուեց ռադիօդասակը: Պատերի շուրջը խնամքով սարքած երկյարկանի քնատախտակամածներ, կենտրոնում՝ սեղան ու վառարան, որը մնացել էր ձնեռանից: Մեղանի վրայ ցիր ու ցան թափուած էին խաղաթոքեր եւ անպարկեշտ բացիկներ:

-Լիակատար կոմՖորտով են պատերազմում սրիկաները,- փնթփնթաց դասակի հրամանատար Լէյտենանտը եւ, կազմելով հերթափոխութեան ցուցակը, հանգիստ իր-բանն տեց:

Կէս գիշերը մօտ էր, եւ Բորիսի հետ կապելու յոյսով՝ Ռազմիկը ցանկութիւն յայտնեց անմիջապէս անցնել հերթապահութեան ռադիօկայանի վրայ: Լէյտենանտը մի պահ զարմացաւ, սակայն, չթաքցնելով ուրախութիւնը համաձայնեց. չերթից յետոյ բոլորը յոգնած էին եւ արդ առաջին հերթափոխն ամենաձանրն էր:

Այժմ, ասարտելով կապի հերթական սեանը, այս անգամ մանկութեան խմբի կազմում «տեղատարափ» ռմբակոծութեան տակ գտնող, սակայն կենտրոնախոսութիւնը չկորցնող Եաշա Չագայնովի հետ եւ ստանալով նրանից ընդմիջման թոյլտութիւնը, Ռազմիկն արագօրէն վերալարեց ընդունիչը No 120 ալիքի վրայ: Գնդի ռադիօկայաններն աշխատում էին «ազատ ցանցում», այսինքն՝ ընդու-

նիչները մնում էին միացած, որպէսզի բաց չթողնի որեւէ շտապ հաղորդում: Այս շաբաթ աշխատանքային ալիքը No 110-ն էր, այնպէս որ Ռազմիկը հեշտութեամբ էր մէկից միւսը՝ մերթ ակնկալելով Բորիսի կանչը, մերթ ակնկալով գնդի ցանցի մէջ ընգրկուած ռադիօկայանները:

Մինչեւ ժամը 12-ը դեռ 10 քուպէ կար: Մատների աննկատ շարժումով Ռազմիկը գնում էր ռադիօեթերը 120-ի մօտակայքում, որպէսզի բաց չթողնի Բորիսի կանչը, եթէ նրա հաղորդիչը պատահաբար 120-ի նկատմամբ մի փոքր ապալարուած լինի: Այդ գործողութիւնները չէին խանգարում Ռազմիկին, ըստ սովորութեան, մտովի փոխադրել խաղաղ անցեալը, որտեղ մնացել էին տնեցիները, դպրոցը, ջութակը եւ որտեղ... չկար պատերազմը:

Եթերը, ինչպէս միշտ, լեկ-լեցուն էր Մորգէի ազդանշաններով եւ միկրոՖոնով աշխատող անթիւ կայանների եւ կայանիկների ձայներով: Փորձառու ականջը միայն ի վիճակի էր այդ աղմուկ-աղաղակի մէջ լսել որոնող կայանի մոծակազօր տոգոցը: Օգնում էր ռադիօհաղորդչի ձայնի երանգի նրբագոյն իւրայատկութիւնը եւ ռադիստի «ձեռագիրը»: Դիշտ է, ըստ կանոնների, հեռագրաբանալիով աշխատելիս «ձեռագիրը» արգելուում էր, սակայն փորձառու «ռադիօսար» բանալու առաջին իսկ հայումից զիտեր, թէ ով է հաղորդողը:

Մտքերի թելը կտրեց... հերթական «գոհը». իրատեսակ երգող տունը անշուշտ պատկանում էր Ռազմիկին քաջ ծանօթ գերմանական ռադիօհաղորդչին: Երեք ամիս առաջ գնդի մօտակայքում վայր էր ընկել մեր գեներալինների խմբած «Իւնկերս» ռմբակոծիչը: Հարածից ինքնաթիռի առաջնամասը շարժիչի հետ պոկել էր կմախքից եւ ընկել 50 մետր հեռու: Ի զարմանք բոլորի՝ ռադիօհաղորդիչը չէր վնասուել եւ մինչեւ օրս ծառայում էր Ռազմիկին: Դա իր առատելութիւններն ուներ. իւրայինները ճանաչում էին նրա թոշնածայն երգը, իսկ գերմանացիք՝ խաբուում:

«Ֆրիցն» արդէն մի քանի անգամ կրկնել էր կոչային ազդանշանը, սակայն անպատասխան: Ռազմիկը զգոյշ շարժեց ընդունիչի բռնակը... Այո, հէնց այն է, ինչը նա սպասում էր՝ «Ֆրիցի» արձանետը նոյն ապարդիւն ջանքերն էր թափում մի փոքր շեղուած ալիքի վրայ: «Հաւանաբար սկսանակներ են», մտածեց Ռազմիկն ու անմիջապէս գործի անցաւ:

-Վիտեա՛ր, Վիկտոր, շուտ միացրու շարժիչը. ինչ-որ Ֆրիցիկ գրուցակից չի գտնում... օգնենք, հոգին թեթեւացնի:

Մինչեւ Վիկտորը գործի էր դնում կայանը սնող գեներատորի բեռնաշարժիչը, Ռազմիկը համալարեց իր ընդունիչն առաջին «Ֆրիցի» հաղորդիչի հետ: Այնուհետեւ, միացնելով իր հաղորդիչը, համալարեց այն սեփական ընդունիչի հետ: Եւ միայն դրանից յետոյ իրար եկաւ եթեր: Այս, վաղուց մշակուած գործողութիւնը, փորձառու ռադիօտրները կիրառում էին սկսանակների վրայ:

Յարմարելով երկրորդ «Ֆրիցի» ձեռագրին՝ Ռազմիկը տեց նրա կոչային ազդանշանը եւ հաղորդանքն ընդունելու պատրաստակամութիւնը: Առաջին «Ֆրիցի» ուրախութիւնը զգացեց հեռագրաբանալու աշխուժացած թրխալիցից: Գրի առնելով թային տեսքով ծածկագրած կողորդաման, Ռազմիկը հաստատեց ընդունումը եւ առա-

## Երիտասարդի համար

ջարկեց գերմանացուն երկժամեայ ընդմիջում: Միջագային ռադիոկողով դա տրուում էր այսպես՝ «ԱՍ»-2, իսկ Մորզէյի կողով ունէր այս տեսքը՝

— ... —...— ...—

Վերջինս ուրախացած համաձայնեց:

Այդ «խաղով» տարած՝ Ռազմիկը յանկարծ նկատեց, որ արդէն 12-ն անց է հինգ թայէ: Մտքում հայեցելով «Ֆրիցին», արագ վերալարեց Բորիսի ալիքի վրայ եւ... ուրախութեան խեղդած ճիչ արձակելով՝ «Վիտեա, Բորիսըն է», կայա ընկալուչներին:

—ՎՊՍ, ՎՊՍ, ես ԿԲԲ-ն եմ... քեզ լսում եմ, լսում եմ... չեմ լսում ՌԱԿ-ին... ինչպէս հասկացար: Ընդունում եմ:

Բորիսը կապել էր Ռազմիկի ու իրենց համաքաղաքացի, 3-րդ գումարտակի ռադիստ Վիկտոր Մտեպանենկոյի հետ, որին Ռազմիկը հաղորդել էր Բորիսի հետ իր պայմանաւորածութեան մասին:

Եւ, հէնց որ ընդհատեց Մորզէյի կետերի ու գծերի շարանը, Ռազմիկը «մէջ ընկաւ» իր հաղորդիչով...

—ԿԲԲ, ԿԲԲ, ՎՊՍ, ես ՌԱԿ-ն եմ, ես Ռակն եմ: Չեզ լսում եմ, լսում եմ չորսի... ո՞նց ես ԿԲԲ, ու՞ր ես ... Ընդունում եմ:

—ՌԱԿ, ես ԿԲԲ-եմ, քեզ լսում եմ հինգի, շուտով կը ստանաս մամակս... շատ հեռու չեմ, գուցէ կը հանդիպենք,- արագ շարում էր Բորիսը, իսկ Ռազմիկը, շունչը պահած, ընկալուչները պինդ հպել էր ականջներին:

Այժմ եթէր ներխուժեց Մտեպանենկոն: Կեանքում ամաչկոտ ու քչախօս, ռադիօեթերում նա չգիտես ինչու, դառնում էր շաղկապատ: Մինչդեռ պէտք էր կարճ կտրել, քանի որ բաց տեքստով, ոչ ծառայական գրոյցը կարգապահութեան խախտում էր եւ, թէ հսկիչ կայանը նկատի, ապա գնդի խոհանոցում կարտոֆիլ արտահերթ մաքրելն ապահոված է: Չմայած Ռազմիկի նախագոյնացմանը, Վիկտորը նորից դուրս եկաւ եթեր, աւարտելով իր թղթ-թղթկոցը 88-ով, այսինքն լաւագոյն մաղթանքներով, որին Ռազմիկը պատասխանեց 99-ով (ստանան քեզ տանի): Վերջին խօսքը, սակայն Վիկտորինն էր.

—Բոլորին, բոլորին, «73 Ս»:- Ռադիօծարագնով դա նշանակում էր սէր ու համբոյրներ:

—Հը, ո՞նց է,- մեխանիկ Վիկտոր Բոյկօն անհամբեր քաշում էր Ռազմիկի փէշը:

—Ամէն ինչ լաւ է, Վիտեա:

—Բա, որ ասում էի...

Այդ պահին Ռազմիկն ակամայ մի մազաչափ շարժեց ընդունիչի բռնակը... երկրորդ «Ֆրիցը» համաձայնեց եւ յուսահատ կանչում էր առաջինին: «Ի՛նչ երկար կը կանչես» մտքում չարախնդաց Ռազմիկը: Յետոյ զանգահարեց վերձաման խումբ.

—Մաշ, դու ես՞... ցրիչին ուղարկիր. ոմն Ֆրիցիկ շատ խնդրեց, չկարողացայ մերժել՝ ընդունեցի... փորձէ՛ք գուցէ յաջողի վերձանել:

Նա միացրեց բարձրախօսը եւ դուրս եկաւ մեքենայից, բաց թողնելով դուռը, եթէ որեւէ մէկը կանչի՝ կը լսի:

Գիշերային անտառը զով էր ու թովիչ: Ռազմիկը նոր զգաց, թէ ինչքան յոգնած է: Նա ձգեց մարմնով եւ քայլերն ուղղեց դէպի հիւրակ. ժամանակն էր արթնացնել յաջորդ հերթափոխորդին՝ Նատմենկոյին: Սա մեծ դժարութեամբ արթնացաւ, ծանր փնչացնելով քաշեց ոտքերին ճոքակօշիկները եւ դուրս եկաւ: Ռազմիկի տեղը անկիւնում էր՝ քնատախտակամածի առաջին յարկում: Նա ա-

րագ հանեց ու պտկեց: Հաճոյքով վերլիչեց Բորիսի ու Վիկտորի հետ իր ռադիօգրոյցը եւ շատ շուտով սուզեց քնի մէջ:

Ինչպէս յետագայում պարզեց, հազիւ էր անցել 10-15 թայէ, երբ կամացուկ հիւղակ մտաւ պահակադիրը՝ կրքուտեր սերժանտ Մեշչերեակովը: Նա արթնացրեց Ռազմիկին, մեղմօրէն ձօճելով նրա ոտքերը:

—Լսում ես, Ռազմիկ,- փսիսաց նա,- ժամը չե՞ս ասի:

Նոր քուն մտած Ռազմիկը մի պահ շշկլած ճպճպացրեց աչքերը՝ յետոյ, ուշքի գալով, գայրացաւ:

—Խիղճ ունե՞ս, այ մարդ, նոր եմ քնել...

—Ժամն ասա, ախպերիկ, պէտք է,- մեղաւոր ձայնով շշկլաց Մեշչերեակովը:

—Լսիր, հանգիստ թող ինձ, ժամացոյց ունե՞մ, որ ասեմ...

—Բա, էդ ո՞ւմն է տկտկում...

—Շա՞տ գիտեմ...

Մեշչերեակովը տարակուսած դէս ու դէն ականջ դրեց ու արագ դուրս եկաւ: Ռազմիկը չհասցրեց նորից ննջել, երբ կրկին ներս մտաւ Մեշչերեակովը, այս անգամ սակարար սերժանտ Անտոնովի ուղեկցութեամբ: Վերջինս մօտեցաւ Ռազմիկի գրադեցրած անկեանքը, ականջը մօտեցրեց գերանաշար պատին եւ գոռաց՝

—Վե՛ր կացէք, արագ վեր կացէք, դուրս, շուտ արէ՛ք...

Արթնանում էին դժգոհ փնթփնթալով:

—Ի՞նչ է պատահել,- վեր թռնելով տեղից հարցրեց Լէյտենանտը:

—Պատի մէջ ական է, ժամացոյցային սարքով,- ասաց Անտոնովը:- Դատելով ձգած ձայնից՝ 10-15 թայէից կը պայթի: Շտապ դուրս բերէք մարդկանց, ընկեր Լէյտենանտ, ես վազեմ ստուգել միս հիւղակները:

—Արա՛գ, դուրս,- այս անգամ գոռաց Լէյտենանտը,- շորերը հետներդ, դրսում կը հագնուք:

—Ականջներին ձէն են տալիս,- դժգոհեց մէկը, ծուլօրէն վեր կենալով տեղից:

—Թողնել՝ աւելորդ խօսակցութիւնը, կոշտ կտրեց Լէյտենանտը:

Բոլորը դժկամօրէն ձգեցին հիւղակից դուրս եւ, մի փոքր հեռանալով, սկսեցին յարմարել ծառերի տակ: Ռազմիկը հետը վերցնելով իր եւ Նատմենկոյի մասալարկերը, ուղղեց դէպի ռադիօկայան: Նա նոր էր մօտեցել ատօմեքենային, երբ հետեւում հզօր պայթիւն լսեց: Ըստ երեւոյթին հակատանկային ական էր: Ռազմիկը ետ նայեց՝ հիւղակի տեղում, կտուրի բլրակի փոխարէն փոս էր:

«10 թայէ ես, եւ դա կը դառնար մեր եղբայրական գերեզմանը»: Ռազմիկը մի պահ սառեց այդ մտքից:

Մեքենայից դուրս նետեցին Նատմենկոն եւ Բոյկօն. վերջինս ատոմատը ձեռքին:

—Ի՞նչ է պատահել...

Ռազմիկը պատմեց տեղի ունեցածը:

—Դա՛ւ,- երկարացրեց Նատմենկոն:- Ուրեմն մկան բակարդ էին պատրաստել մեզ համար, շան որդիք:

—Բոլորս Մեշչերեակովին ենք պարտական,- զգացած ասաց Ռազմիկը:

Անտառը նորից խաղաղուել էր: Ծառի վրայից թեթեւ խշշոց լսեց. «ակիւռիկ կը լինի», ակամայ ինքն իրեն ասաց Ռազմիկը: Իսկ այնտեղ, որտեղից գալիս էր, ասես ստորգետնեայ, խուլ գուցը, մարիացի Եաշան եւ Ռազմիկի համաքաղաքացի Կոլեան, մետաղեայ յորդ «անձրեփ» տակ շտկում էին մեր հրետանու կրակը: ■